

891.99.092 ՇԱՐԿԱՆԿԱԴ-Լ

F - 72

22984 - 22989

891.99.092 ՇԱՐԿԱՆԿԱԴ-Լ

F - 72

891.71

Ն. Պ. Զ. Ա. Խ. Ի. Խ. Դ.

Ա. Հ.

ԱՐՄԱՆԱԿԵԼԻ ՎՐԵՖԻՆՆԻՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԱՏՏԱՆԱՆԵՐԻ ԿԱՄՈՒՐՃԸ

(Ամերիկական կեանքից).

Օռուսերէնից թարգմ.

ԼԵՒՈՆ Գ. Է. Ա. Ր. Գ. Ե. Ե. Ն. Ց.

Թ. Ի. Գ. Լ. Ի. Ս.

Տպարան Ա. Շարաձեհ, Նիկոլ, առ. 21.

1896

30384-42

Дозволено Цензурою, Тифлисъ, 1 Мая 1896 года.



(2068)
41

13973-8

ԳԼ. Ա.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆԵՐ

Իսպանիայի մէկ քաղաքից լիսուն վերստ
հեռաւորութեան վրայ գտնուող մի ամայի
և հրատոչոր անապտուի միջով յամը ընթաց
գնում էր մի առևտրական կառավան, իսկ սո-
րա հետեւից ընթանում էին բաւականին դի-
տողութեամբ բեռնաւորուած մի քանի սալլեր։
Այս իրերը մէկ տեղից միւս տեղ շրջող գաղ-
թականների ունեցած չունեցածն էին։ Ամեն
մի սալլին լծուած էին վեց զօրեղ և պարա-
տամարմին ցուլեր, որ և ապացոյց էր. թէ
գաղթականները աղքատ մարդիկ չէին։ Ինքը՝
բաւականին փութացանութեամբ բեռնաւորած
այս սալլերի տէրը՝ լիսուն տարեկան հասակի
մի հիւծամարմին տղամարդ էր. նա հագնուած
էր բաւականին պարզ ու հասարակ, և խրոխտ
պարթեական մարմնով նստած էր իր երիւա-
րի վրայ։ Սորա հետ միասին ձին հեծած
գնում էր մի երիտասարդ, որը հասակով կա-
րող էր լինել ոչ աւել քան քսան տարեկան,
իսկ մի քիչ հեռու, սրա հետեւից, գեղեցիկ

նժոյգի վրայ նստած գալիս էր երեսուն տաշը եկան մի սիրուն պարոն։ Առաջինը՝ Մօդլէց ագարակատիրոջ—որ սայլերի տիրապետն էր—որդին էր, իսկ երկրորդը՝ նրա ազգականը։ Սրանց հետևից գալիս էր ճանապարհորդական համակառքը, որի մէջ հանգիստ նստած էին երկու երիտասարդ անձնուհին. սրանցից մէկը քսաներկու տարեկան թխահեր երիտասարդուհի էր, իսկ միւսը իւր ճանապարհորդակցին համաչափ հասակով կարմրահեր, բայց աւելի փոքր էր երեսում յիշեալից, սա ագարակատիրոջ աղջիկն էր։

Օրուայ սոսկալի հրատապ ջերմութիւնից, կարաւանը հազիւ էր կարողանում առաջ գնալ։

—Ես կարծում եմ, որ մենք տասը մզոնից աւելի չպէտք է անցնենք, ուստի մինչև գիշերուայ վրայ հասնելը մենք կարող ենք մեր որոշած տեղը հասնել, արտասանեց ագարակատէրը, դառնալով դէպի իւր որդին։

—Ես բոլորովին համաձայն եմ քեզ հետ, հայր, պատասխանեց որդին։

—Նաևիք, հօրեղբայր, այն ինչ բան է, ասաց ագարակատիրոջ ազգականը, ձեռքով ցոյց տալով դէպի աջ։

—Ո՛յն, դա մարգագետինն է, ահա և

երեսում է ածուխ դարձած խոտը, նա բոցավառուած է։

—Այդ ճարակաւոր երեսոյթը հապա մեր ճանապարհորդութիւնը չէ խանգարիլ, հարցրեց որդին հօրից։

—Ի հարկէ, ոչ, պատասխանեց հայրը։

—Ասենք քո ասածը բոլորովին ճշմարիտ չէ, սկսեց խօսել ազգականը, մեզ համար այժմ շատ դժուար է ճանապարհը գտնել և կարող ենք խոտորուել։

—Ինչո՞ւ համար։

—Որովհետև ակների հետքերի բացած ուղին ևս ոչնչացել է խոտի հետ։

—Դատարկ բան է, կառապանները հարցու փորձ անելով ճանապարհը կը գտնեն, բնաւ կարիք չկայ վախենալու, հանդարտացրեց ագարակատէրը իր ընկերներին։

—Գիտես ինչ կայ, հօրեղբայր, ես կարծում եմ, որ մեզ հարկաւոր է դէպի աջ շեղուել, այն ժամանակ մենք կարող ենք դուրս գալ իսկական ճանապարհը։

—Դու կարծում ես, թէ այդպէս է։

—Մինչև անգամ համոզուած եմ, որ իմ ենթադրածը ճիշտ է, ուստի ես յառաջ կը սլանամ, իսկ դուք հետևեցէք ինձ, ասաց երիտասարդը և աճապարեց ձիուն։

— Տես, Կասսիլոս, չ'սխալուես:
— Հանգիստ եղիր, հօրեղբայր, ձայն տուեց
ազգականը, առաջ անցնելով:

Կէս ժամուալ չափ անցաւ, որ Կասսիլը
ձեռնամուխ եղաւ ճանապարհը ցոյց տալու,
բայց տակաւին ճանապարհորդները իսկական
ճանապարհի վերայ չէին գտնւում:

— Կանգնիր, Կասսիլ, Եթէ մենք շարու-
նակ քեզ հետևենք, ապա դուրս կը գանք մի
այնպիսի անմարդաբնակ վայր, որտեղից այլ
ևս չենք կտրող ազատուել, և արդէն երեկոն
մօտ է, տես, այնպէս արա, որ մենք այսօր
բացօղեալ երկնքի տակ չ'դեգերենք, ձայն
տուեց ազարսկառէրը:

— Կարծում եմ, դու ճշմարիտ ես ասում,
հեռատես հօրեղբայր: Ո՞չ, Աստուած իմ,
Բնչ պէտք է անենք մենք այժմ. ճանապար-
հը բոլորովին կորցրել ենք, մտածողութեան
մէջ ընկաւ Կասսիլը:

— Ես դրականապէս ոչինչ չեմ իմանում,
բայց միայն գիտեմ, որ մեր գործը շատ վատ
հետևանք է ունենալու, ասաց ազարակա-
տէրը:

— Լաւ ուղեցոյց ես, միայն ծուռ ճանա-
պարհներով մեզ սխալեցնում ես, աւելի լաւ
կը լինէր, որ դու յանձն չառնէիր մեզ առաջ-

նորդելու, յանդիմանեց սորան ագարակատի-
րոջ երիտասարդ որդին:

— Սակայն, չէ որ այդ միայն մեր են-
թադրութիւնն է, թէ մենք իսկական ճանա-
պարհից շեղուել ենք և կարող է պատահել,
որ հէնց այս ճանապարհը իսկապէս իսկական
ճանապարհը լինի: Ահա, նայեցէք, այնտեղ
թփեր են երեւում, աւելացրեց Կասսիլը, ցոյց
տալով մի կողմը:

— Ո՞չ, ոչ, շնորհակալ եմ, ազգական,
Աստուած գիտէ թէ դու ուր ես տանում մեզ:

Ճանապարհորդները մի քանի ըոպէ կանգ-
առած մնացին տարակուսանքի և անվճռակա-
նութեան մէջ:

ԳԼ. Բ.

Ա Ն Ս Պ Ա Ս Ե Լ Ի Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ Ն

— Աստուած իմ, Բնչ պէտք է անենք
այժմ, սարսափի մէջ ընկած բացականչեց մա-
տաղահասակ խարտեշահերուհին, նախատես-
նելով իրանց վտանգը:

— Մի վախիր, մանկիկս, վտանգը այն-
քան էլ ահռելի չէ, որչափ քեզ ներկայանում
է, այսպիսի քաջալերիչ խօսքերով ազարակա-
տէրը աշխատում էր հանգստացնել իւր
աղջկանը:

— Նայիր, հայր, այն Բնէ բան է հեռաւում սկին տալիս, ասաց երիտասարդը դառնալով հօրը և մատնացոյց անելով այն վայրը, ուր նա նշմարում էր սեագոյն բիծը:

— Ինչ որ է, չեմ տեսնում, ասաց ագարակատէրը:

— Սակայն գիտէք դուք, որ այդ երևացող առարկան մի ձիաւոր է, որ ուղիղ գէպի մեզ է գալիս, ասաց Կասսիյը, զննողաբարդիտով գէպի հեռուն:

— Ե՛հ, իրանից դարձեալ նոր-նոր բաներ հնարեց. Բնէ ձիաւոր, որտեղից պէտք է նա գայ, պատասխանեց ագարակատէրը:

— Հաւատացնում եմ քեզ, հօրեղբայր, որ իմ ասածը հաւաստի է, նայիր, արդէն նրան լաւ կարելի է տեսնել, հաւատացնում էր Կասսիյը:

— Այս, հիմա տեսնում եմ նրան, նա ուղակի գէպի մեզ է գալիս, համաձայնուեց ագարակատէրը:

— Շարժումներ արէք նրան, զուտնվ, կանչեցէք նրան այստեղ, թերես մի մխիթարական բան հաղորդէ մեզ, ասաց երիտասարդը:

Մի քանի րոպէ անցնելուց յետոյ նրանց հանդէպ կանգնած էր մի ձիաւոր: Դա՝ մի արտաքոյ կարգի գեղեցկութիւն ունեցող պա-

րոն էր, գրաւիչ կերպարանքով և դեռ կատարեալ արբունքի հասակում. նա հագած ունէր թաւիշեալ բաճկոնտակ և նոյն տեսակ վարտիկ, նրա արտաքինը անվեհեր և գիմագրաւ արտալայտութիւն ունէր, կարծէք թէ մէկ հերոս լինէր:

— Ողորմած տէր, մենք ամերիկացիներ ենք. Ես ագարակատէր եմ և այս տեղերում ինձ համար կալուածատեղի եմ գնել և հիմա տեղափոխուում ենք այնտեղ ամբողջ ընտանիքով, բայց գժբաղտաբար խոտորուել ենք իսկական ճանապարհից... Հիմա գրականապէս չը գիտենք թէ Բնէ անենք, ուր գնանք: Զի՞ք կարող դուք մի որ և է սփոփիչ բանով մեզ օգնել, ագարակատէրը դիմեց ձիաւորին՝ յուսալով, որ վերջինիցս մի օգնութիւն կը գտնէ:

— Այս, դուք ճշմարիտ էք ասում, բոլորովին շեղուել էք ուղիղ ճանապարհից, ասաց ձիաւորը:

— Հապա Բնէ պէտք է անենք.

— Գիտէք, Բնէ կայ, Ես պատահաբար ընկայ ձեր շաւիղը և գուշակեցի, թէ ինչ որ ճանապարհորդներ խոտորուել են իրանց ձգտելի նպատակակետից, ուստի կարեսը համարեցի գտնել ձեզ և օգնել, ասաց փաղաքշաբար ձիաւորը:

— Ողորմած տէր, խօսք չեմ գտնում ձեզ
իմ խորին շնորհակալութիւնը արտայայտելու,
ասաց ագարակատէրը:

— Գիտէք, ես ձեզ մի բան պէտք է ա-
ռաջարկեմ: Դուք կը հետևէք իմ ձիու շաւզի
ուղղութեանը, որովհետև ես ինքս գնում եմ
այնտեղ, ուր որ դուք պէտք է գնաք, առա-
ջարկեց ձիաւորը:

— Շնորհակալ եմ ձեզանից և մեծ ցան-
կութեամբ կը հետևենք ձեզ:

— Սակայն և այնպէս, այս դէպքումն էլ
կարող էք անյաջողութեան ենթարկուել, երկ-
բայց ձիաւորը:

— Ի՞նչ անյաջողութեան, որտեղից կարող
է առաջ գալ, բացականչեց ագարակատէրը:

— Անյաջողութիւնը կարող է յառաջ գալ
այն հանգամանքից, որ ձիս ընտելացած է ա-
րագաքայլ ընթացքի և սրան զսպելու հա-
մար ոչ մի զօրաւոր միջոց չկայ, հետևապէս
դուք պէտք է ինձանից յետ մնաք, իսկ ձիուս
հետքերը արդեօք աւազի վրայ կը նշմա-
րուի... տեսնում էք, ի՞նչպիսի քամի է բարձ-
րացել, ասաց ձիաւորը:

Ո՞հ... Հապա ի՞նչ պէտք է անենք, մի
ի՞նչ որ սարսուոի ազդեցութեան ներքոյ վրայ
բերեց ագարակատէրը:

— Ահա ես մի նոր կարգադրութիւն եմ
մտածել. ես ձիուս թամբին կը կապեմ մօտս
եղած պարանը, որը մօտս է լինում որ և է
գործի համար, պարանի ծայրը գետինը բաց
կը թողնեմ, որով ձեզ համար ճանապարհ կը
բացուի, այս պարանը մի քանի սաժէն երկա-
րութիւն ունի:

— Ո՞հ, ինչքան մեծահոգի էք դուք, ողոր-
մած տէր, բարձր ձայնով արտասանեց ագա-
րակատէրը:

Ձիաւորը պարանի մէկ ծայրը ամուր կեր-
պով կապեց թամբից, իսկ միւս ծայրը բաց
թողեց գետինը և ձայն տռւեց «պատրաստ է»:
Այս խօսքերի հետ նորա ձին թռչունի պէս
առաջ սուրաց, իսկ պարանը աւազային շերտի
վրայ լայն հետք դրօշմեց:

— Ինչու մենք նորա անունը չ'հարցրինք,
առհասարակ չիմացանք թէ ի՞նչ տեսակ մարդ
է նա, յանկարծ մտաբերեց Կասսիլը:

— Այո՛, այս անտարբերութիւնը իսկապէս
մեծ սխալ է:

— Բայց այդ ձիաւորը, անպատճառ ազ-
նուական պէտք է լինէր, ասաց ագարակա-
տիրոջ աղջիկը, որ լիշեալ խօսակցութեան ժա-
մանակ իւր չքնաղ աչքերը յածում էր ձիաւո-
րի մոգիչ և վառվառ գեղեցկութեան վրայ:

— Ե՛հ, այդ հաստատապէս չի կարելի ասել, ինչ որ անբաւականութեամբ պատասխանեց Կասսիյը, հարեանցի նայելով Լուիզայի վրայ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ ազնուականը երբէք այնպիսի զգեստ չէ հագնում: Բայց ես տեսնում եմ, Լուիզա, որ այն ձիաւորը քո վրայ մեծ տապաւորութիւն գործեց, նորից խօսեց Կասսիյը, որի խօսակցութեան ձեր մէջ լսւում էր նախանձի և կասկածութեան ձայներ:

— Կարող է պատահել, սառնօրէն ասաց Լուիզան:

— Ես կարծում եմ, քեզ շատ հաճելի կը լինի, եթէ համակառքդ նորան հասնի, մեզ պատահած ձիաւորին, նրա գեղեցիկ երեսը տեսնելու և հետը սիրահարուելու:

— Թո՛ղ այդպիսի խօսակցութիւնը, Կայսիյ, թոյլ տուր անդորրութիւնս չ'վրդովելու, քեզ արդէն յայտնի է, որ ես չեմ սիրում, երբոր դու սկսում ես այդպիսի բաների վրայ խօսակցել, ասաց Լիուզան:

— Բայց ինձ համար մեծ գուարծութիւն է, Լուիզա, երբոր սկսում եմ քեզ գրգռել երբեմն:

— Ես խնդրում եմ քեզանից, Կայսիյ,

լռել, արդէն բաւականին խիստ ձայնով ասաց Լուիզան:

— Ուրեմն շնորհաւորում եմ քո գտած իրը, չ'զսպեց իրեն Կասսիյը:

Լուիզան պատասխան չ'տուեց և վեհանձնաբար երեսի վրայ լնկաւ բարձի վրայ:

ԳԼ Գ.

Ն Ո Ր Վ Տ Ա Ն Գ

Հանգստացած ճանապարհորդները ուղևորուեցան մատնացոյց արած ճանապարհով բարձրովին անդորր սրտով և սպասելով, որ շուտ պէտք է հասնեն ապաստանարանին:

— Բայց թնչպիսի բարի մարդ էր այն պարոնը, ափսոս, որ ես նրա անունը չիմացայ, խօսեց ագարակատէրը:

— Մի շտապիր նրան գովել, հօրեղբայր, ասաց Կասսիյը:

— Ինչո՞ւ համար:

— Նրա համար, որ տակաւին յայտնի չէ մեզ, թէ սպառնացող վտանգն անցել է, կամ արդեօք ուղիղ ճանապարհ ցո՞յց տուեց նա մեզ:

— Խնդրեմ ասա, դրանով ինչ ես ուղում ասել, հարցրեց զարմացած ագարակատէրը:

— Ուզում եմ այն ասել, որ շատ կարելի է այդ ձիաւորը մի խարեբալ մարդ լինի և

յոռի նպատակ ունենայ մեզ այս լայնածաւալ անապատի մէջ, գտնելով այսպիսի դժուար վիճակում, ասաց Կասսիլը:

— Ո՞հ, քո թիւրիմաց ենթադրութիւնը բոլորովին դատարկ բան է, պարզ երևում է, որ այդ պարոնը, բացի ազնիւ դիտաւորութիւնից, ուրիշ ոչ մի վատ նպատակ չէ ունեցել, միջամտեց Հենրիկոսը:

— Սակայն, դու ի՞նչ ես կարծում, սիրելի հօրեղբայր, նա ինչ տեսակ մարդ էր, եւ ուր էր այնպէս ճեպով ընթանում, որ մինչև անգամ չէր բարեհաճում մեզ հետ մի փոքր ժամանակ խօսակցել, հարցրեց Կասիլը:

— Ես կարծում եմ, որ նա սուրհանդակ պէտք է լինէր:

— Ո՞հ, կարծում եմ, որ հէնց քո այդ սուրհանդակը մեզ թակարդի մէջ է ձգել, չկարողացաւ իրան զսպել Կասիլը:

— Ո՞հ, դոքա դատարկ բաներ են, կրկնում եմ քեզ, ազգական:

— Հայրիկ, հայրիկ, նայիր, ահա մեզնից սակաւ հեռաւում բոյս է երևում, ես բարձր ծառեր եմ տեսնում, այնպէս որ մենք շուտով այս տաղտկալի անապատից դուրս կը դանք, հրճուալից սրտով ձայն տուեց Լուիդան, աչքերը համակառքից դանդաղելով:

— Այո՛, այո՛, ես էլ եմ տեսնում, հաստատեց Հենրիկոսը:

— Ոլն ի՞նչ ահռելի երևոյթ է, որ յանկարծ այնպիսի աղջամզջային կերպարանք ստացաւ, ոհի, նայեցէք, ինչպիսի սոսկալի և դժուխային ամպեր են կուտակւում, իսկ այն կողմը, մեզնից մի փոքր հեռու, կարծէք թէ սև սիւներ են կանգնած եթերքում, հաւանական է, որ այդ առաջ է եկել բարձրացած անթափանցելի փոշուց, այնպէս որ, պէտք է սպասենք փոթորիկի բարձրանալուն, մինչև որ անցնէ, բայց այդ էլ զարհութելի՛ է, արհաւիրքի ազդեցութեան տակ ասաց ագարակատէրը:

Ամենքն էլ սկսեցին դողդողագին և ուշիուշով դիտել իրանց հանգէպ կանգնած ամպասիւների վրայ, որոնք մերթ ի մի էին յօդւում և մերթ անջատւում միմեանցից. այսպիսի չտեսած երևոյթը քիչ չէր վախեցնում մեր ճանապարհորդներին:

— Անգութ վտանգը սպասնալիք է կարդում մեր դէմ, համարեա վհատութեամբ ասաց Լուիդան:

Հէնց այս կրիտիքական ժամանակամիջոցում նոցա ականջին լսելի եղաւ մի անախորժ գլուղոց, որ արձագանք տուեց նոցա առաջ.

այս դղբդոցը հետզհետէ զօրեղանում էր և կարծէք աստիճանաբար մօտենում նոցա։ Ամենքը յուսահատութեամբ պաշարուած էին։ Այս ինչ բան է, զարմացած հարցրեց ագարակատէրը։

— Հայրիկ ես նշմարում եմ մի ձիաւոր, որ դէպի մեզ է գալիս, բայց սա այն չէ, որ յանձն առաւ մեզ առաջնորդելու, մի ինչ որ դժուարին անձկութեամբ ասաց Լուիզան։

Եւ իրօք մի քիչ ժամանակից յետոյ ագարակատիրոջ առաջ կանգնած էր մի ձիաւոր, որի մարմինը ամբողջապէս ծածկուած էր սև փոշիով և արաբի պէս դիտում էր այս մարդկանցը, բայց Լուիզան սխալուած էր. դա այն անձնաւորութիւնն էր, որին մի քանի ժամ առաջ Լուիզան այնպիսի սիրով նայում էր։

— Շտապեցէք առաջ, անյապաղ շտապեցէք առաջ՝ որքան կարելի է շուտ, ամենակուլ փոթորիկը մերձենում է. տեսնում էք այդ ահարկու սիւները, դոքա սարսափելի արկածի համբաւաբերներ են, ասում էր մօտեցող ձիաւորը։

— Այս, մենք էլ ենք վաղուց նկատել այդ ամպասիւները, սակայն չ'գիտենք թէ ինչ են նշանակում դոքա, ասաց ագարակատէրը։

— Արագութեամբ շտապեցէք, ի սէր Աս-

տուծոյ, արագութեամբ։ Տեսնում էք ձեր հանդէպի սև ամպերը։ Այնպէս արէք, որ վտանգ չ'պատահի, ասաց ձիաւորը։

— Իսկ մենք հիմա բնչ պէտք է անենք, բայցականչեցին համարեա մէկ ձայնով հայր և որդին։

— Յուսահատութեան ազգեցութեան տակ միք ընկնիլ, միայն առանց որ և է խոչնդուցոյց տալու կամքիս հնագանդուեցէք։ Հրամայեցէք շուտով, որ ջորիները կանգնացնեն և աչքերը կապեն, իսկ դուք ամեն կողմից փաթաթուեցէք հաստ շորերով և միմեանց կից գետնի վրայ պառկեցէք. նոյնպէս հրամայեցէք, որ սալլը և բոլոր իրեղէնները ամուր ծածկեն։ Դուք պառկած դրութեան մէջ պէտք է մնաք, մինչև որ ես ձեզ ձայն կը տամ, որ կը յայտնի փոթորիկի վախճանը։

Ճանապարհորդները լիովին նրան հնագանդուեցան։

Դուտով փոթորիկը բարձրացաւ, մի այնպիսի արտաքոյ կարգի փոթորիկ, որ անկարելի է նկարագրել։ Սև փոշու ամպերի սիւները հետզհետէ խտանում և մեծ ծաւալ էին ստանում, տագնապի մէջ ընկղմուած ճանապարհորդների ականջներում բարձրացաւ մի ինչ որ ճիչ և հառաջանք, այս ճգնաժամի մէջ



13943 -

Նոքա «մնաս բարեաւ» էին մաղթում կեանքին։ Այս սրտաձմլիկ տեսարանը մի ժամուայ չափ տեսեց։

— Աղէտն անցաւ առանց որ և է զգալի վնաս հասցնելու ճանապարհորդներին։ Զիաւորի ձայնը հնչուեց ագարակատիրոջ ականջին։

— Ողորմած տէր, ես պատշաճ խօսք չեմ գտնում, իմ խորին շնորհակալութիւնը ձեզ յայտնելու, բացականչեց ագարակատէրը, ամուր սեղմելով ձիաւորի ձեռքը։

— Մենք մեր կեանքը պարտական ենք այս առաքինի մարդուն, աղաղակեց Լուիզան, մեղմ հայեացք ձգելով իւր Փրկչին։

— Ասացէք ինձ, խնդրեմ, ինչպէս է ձեր անունը, ով էք դուք, որպէս զի միշտ մեր աղօթքի ժամանակ լիշտավենք ձեր անունը, խօսեց Հենրիկոսը։

— Անունս Մօրիս է, ասաց ձիաւորը։

— Այո՛, դուք ներկայումս աղետից ազատ էք, թէպէտ չի կարելի ասել, որ փոթորիկը էք, թէպէտ չի կարելի ասել, որ փոթորիկը էք, բոլորովին վերջացել է, բայց այնուհետև նա բոլորովին վերջացել է, բայց այնուհետև նա ոչ ոքի չէ կարող վնաս պատճառել, հանգստացնեց ձիաւորը ճանապարհորդներին։

ԳԼ Գ.

. Զ Ի Ե Ր Ի Զ Ս Պ Ո Վ Ը Լ

Ալաշ գետի ափին մի փոքրիկ և անշուք խրճիթ կար կանգնած, որի ներքին կազմութիւնը հրապուրիչ տեսք ունէր։ Խրճիթի պատերի վրայ կախուած էին զանազան գոյն ունեցող մորթիներ, միջի բոլոր կարասիները կազմուած էին նոյնպէս մորթիներից, որ ձեռք էին բերուած այլ և այլ կենդանիներից։ Սենեակի այս զարդարիչ մորթիները տեսնողի վրայ մի տեսակ երեակալական աշխարհի տպաւորութիւնն էին թողնում։

Մի մեծ նստարանի վրայ բազմած էր մի երիտասարդ, բաւականին աղքատ հագնուած։ Նրա դէմքը արտայալում էր խորին թախծութիւն և հոգեկան յուզմունք, երեսում էր, որ տխուր և վհատեցուցիչ մտածմունքները նրան պաշարել էին։

— Ի՞նչ է պատահել, արդեօք, որ մինչև այժմ տէրս չէ երեսում, ինչ որ մտածմունքների մէջ ընկղմուած ասաց նա ինքն իրեն և դէպի լուսամուտը նայեց։

— Ի՞նչ է, միթէ պարոնս գիտաւորուել է այստեղ բնակութիւն հաստատել, աչքից ձգել է իր դղեակը և ապրում է այս հասա-

ըակ հիւղի մէջ. այնպէս է իր վայրենի ձիերի հետ կապուել և նրանց կենցաղին համակերպուել, որ կարծես թէ ուրիշ կեանք նրա համար գոյութիւն չունի, օտարոտի յանդիմանութեամբ շարունակեց նա ինքն իրեն դատողութիւններ տալ, նստարանի վրայ նստած։ Շուտով դարպասի կողմից լսուեց ձիու ոտքերի տրոփիւն և դռան մի քանի անգամ խփեցին։

— Հաւանական է, որ Մօրիսը լինի, էլ ուրիշ ով պէտք է լինի և մտածող պարոնը տեղից վեր կենալով՝ դուրս եկաւ խրճիթից։

— Բարով եկար, պարոն Մօրիս, երկար ժամանակ է, որ դուք հեռաւորութեան մէջ էք, ես արդէն սկսել էի մտածել, թէ մի դուցէ ձեզ որ և է դժբաղդութիւն է պատահել, բարեղջունեց ծառան իր տիրոջ։

Մօրիսը լուռ ու մունջ ներս մտաւ խըրձիթը։ Ծառան նկատեց, որ իր տէրը հոգու անդորր տրամադրութեան տակ չէ վերադարձել այս անգամ։

— Երևի որսորդութեան մէջ յաջողութիւն չէ ունեցել, մտածեց ծառան։

Մօրիսը ներս մտնելով խրձիթը՝ ուժասպառ ընկաւ անկողինը։

— Պարոն Մօրիս, ի՞նչ է պատահել քեզ, հոգացողութեամբ հարցրեց ծառան։

— Թո՛ղ ինձ, հրամայաբար պատասխանեց Մօրիսը։

Ծառան իրեն վայելուչ դիրք տալով և աչքերը ներքև չ'խոնարհելով դիտում էր Մօրիսի դէմքի արտայալտութիւնը, որ ենթակայ էր ըովէական փոփոխութեան։

— Օ՛հ, որքան չքնաղ և անզուգական գեղեցկուհի էր նա, կարծէք Մօրիսը զառանցում էր անրջի մէջ։

Ծառան այս լսելով՝ ականջները աւելի ես սրեց և սկսեց լսել, թէ արդեօք իւր տէրը լիշեալ խօսքերի պէս խօսքեր էլի կ'արտասանի, սակայն Մօրիսը լամառաբար լոեց։

Մի քանի ըովէից յետոյ դարպասի մօտից մի ձայն լսուեց։

— Գնա՛, տես ի՞նչ է, հրամայեց Մօրիսը։

Ծառան դուրս գնաց, բայց մենակ չ'վերաբերաւ։ Նրա հետևից ներս մտաւ մի բարձրահասակ պարոն, բարձր կօշիկներ հագած։ Նա սպառագինուած էր և նրա արտաքինից միտնգամայն կարելի էր գուշակել, որ նա «որսորդ» է։

— Բարեաւ ձեզ, Մօրիս, արտասանեց ներս մտնողը։

— Օ՛, Կլաւդիոս, այդ դու ես, կարծէք թէ ակամայ վրայ բերեց տանտէրը։

— Այս մօտ օրերս դու ուր էիր անյայտացել, հարցը հիւրը:

— Ես մէկ վայրենի ձի եմ ճարել, որ արդէն կէս տարի է ինձ հանգստութիւր չէր տալիս: Ես ոչ մի լաւ բան չեմ տեսել, բացի այս ձիուց. առաջին անգամ երբ ես պատահեցի անապատում, երդուեցի, որ իմը պէտք է դարձնեմ և ահա դարձրել եմ, ինքնաբաւականութեամբ ասաց Մօրիսը:

— Հարցն այն է, թէ դու նրան կարող ես զսպել, սանձահարել:

— Ե՛հ, դրա մասին աւելորդ է մտածել, արդէն երբ ճարել եմ, նշանակում է և զսպել կարող եմ, պատասխանեց Մօրիսը:

— Ուզո՞ւմ էք ձին տեսնել, հարցը Մօրիսը:

— Գնանք, կը տեսնեմ:

Մօրիսը կլաւդիոսին դուրս տարաւ բակը, ուր կապուած էր ըռնուած ձին, որի անբացատրելի գեղեցկութիւնը սքանչելի էր, բայց նորա երփներանդ լինելը առաւել տարօրինակ բան էր:

— Ո՛, որքան գեղեցիկ է... բայց ես ձեզ մի բան պէտք է ասեմ: Դուք, ի հարկէ չէք հաւատալ իմ խօսքերին, սակայն ես ձեզ պէտք է հաւատացնեմ, ինչպէս ազնիւ մարդ,

որ դուք այս ձիու համար կարող էք ահապին գումար ստանալ, բացի դրանից խորին շնորհակալութիւն մի այնպիսի գեղեցկութիւն, որի նմանը հազիւ թէ դուք ձեր կեանքի ընթացքում տեսած լինէք:

— Յայտնեցէք, այդ ով է, շատ հետաքրքիր է ինձ....

ԳԼ. Ե.

ՄԻ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԴԵՊՔ

— Իմ համեստ բարեկամներից մէկը, որ վերջին ժամանակ այս կողմերում իրեն համար ձեռք բերեց մի կացարան իւր որդու, ազգականի և իւր չքնաղագեղ աղջկալ հետ, այս օրերս ինձ պատահեց և իմանալով զբաղմունքս՝ ասաց ինձ հետեւելը.

— Միրելի կլաւդիոս, ինձ մի փոքրիկ ծառայութիւն պէտք է անես, որի փոխարէն պատրաստ եմ առատ վարձատրելու քեզ:

Ինձ այդ խնդիրը զարմացըեց, սկսեցի հետաքրքրութեամբ հարց ու փորձ անել և ահա ինչ իմացալ: Իմ հին ծանօթ Մօդէս ադարակատիրոջ աղջիկը, գեղեցկուհի Լուիզան, որ այնքան փափագով սիրահար է ձիերին, մէտ լսել է քո այդ գոյնզգոյն ձիու մասին և կից լսել է քո այդ գոյնզգոյն ձիու մասին և հօրը հանգստութիւն չէ տալիս, մեծապէս

թախանձում է վերջինիցս, որ իրեն համար անպատճառ ձեռք բերէ: Ես ագարակատիրոջ խոստացայ հոգ տանել դրա մասին, ի հարկէ, Մօրիս, ձեզ ի նկատի ունենալով և արդէն կարիք էլ չկայ հոգալու, ձին պատրաստ է, հարկաւոր է միայն գինը նշանակել, ասաց Կլաւդիոսը:

Մօրիսը իւր հիւրի արած պատմութիւնը լսում էր մեծ ուշադրութեամբ և նրա վերջացնելուց յետոյ ընկաւ ինչ որ խոկումների մէջ:

—Ի՞նչ պատահեց ձեզ, միթէ դժուար է այդ ձիուց բաժանուելը. Եթէ այդպէս է, ուժով ոչ ոք չի վերցնիլ, բայց ես հաւատացած եմ, որ Եթէ տեսնէք գեղեցկուհի Լուիզային, Երբէք չէք մերժիլ ձեր գոյնզգոյն ձին նրանից, ասաց Կլաւդիոսը խնդալով:

—Ես տեսել եմ նրան, դողդողագին ձայնով ասաց Մօրիսը:

—Տեսել էք: Դուք տեսել էք Լուիզային. որտեղ, զարմացած հարցրեց Կլաւդիոսը:

—Ո՛, դա շատ երկար պատմութիւն է, դա մի տարօրինակ և պատահական դէպք էր:

—Յոյս ունեմ, որ այդ պատմութիւնը գաղտնիք չի մնալ ինձ համար և դուք սիրով կը պատմէք:

—Կը պատմեմ. լսիր: Ես ձեր ծանօթ ագարակատիրոջը պատահեցի անապատում, երբոր նա իւր կարաւանի հետ տեղափոխւում էր նոր բնակարանը. նրանք ճանապարհը կորցրել էին և ես ցոյց տուեցի ուղիղ ճանապարհը, ասաց Մօրիսը:

—Բայց ինչպէս հանդիպեցիք նրանց այն տեղ, ես այդ ոչ մի կերպ չեմ կարողանում ինձ բացատրել:

—Նատ պարզ: Ես անապատումն էի, մէկ վայրենի ձի էի բռնել, բայց ձին այնպէս արագընթաց էր, որ ես չկարողացայ զսպել և տեսնում եմ, որ քիչ հեռու ճանապարհորդներ են թափառում մոլորուած. Հենց որ տեսայ գնացի նրանց մօտ օգնութեան, ասաց Մօրիսը:

—Ո՛, ուրեմն դուք նրանց հնուց ծանօթ էք. լաւ բան է, նշանակում է, որ դուք լաւ դիտել էք Լուիզային:

—Այո՛.... ոչ... ճիշտն ասած, ես հարեւանցի միայն նայեցի նրա վրայ, յուզուած ասաց Մօրիսը:

—Նա մի այնպիսի չնաշխարհիկ գեղեցկութեան տէր անհատ է, որ այստեղի գեղեցկուհիներին կը նսեմացնէ, ասաց Կլաւդիոսը:

—Դուք չ'գիտէք, թէ այն երկու մարդիկ, որ նրա հետն էին, ովքեր էին, Կլաւդիոս:

— Մէկը, որ աւելի փոքրն է, Լուիզայի հարազատ եղբայրն է, իսկ միւսը՝ խորթ եղբայրը, պատասխանեց կլաւդիոսը:

— Ուրեմն, ագարակատէրը մեծ միջոցների տէր մարդ է:

— Այս, նա շատ հարուստ է, բայց աւելի հարուստ է նրա ազգականը, որ կարծեօք բոլորովին սառնութեամբ չէր նայում դէպի իւր ագարակատիրոջ դուստրը, ծիծաղելով ասաց կլաւդիոսը:

— Ճշմարիտ, ես էլ այդ բանը նկատեցի նրանում:

— Օհո, միթէ դուք էլ այդպէս շուտ էք նկատել, Մօրիս, նոյնպէս ծիծաղելով վրայ բերեց կլաւդիոսը:

— Բայց գիշերը բաւականին անցել է, ժամանակ է հանդստանալու, առաջակեց Մօրիսը հիւրին, ցանկանալով այս խօսակցութեանը վերջ դնել:

— Այս, հարկաւոր է հանդստանալ, պատասխանեց կլաւդիոսը:

Մի քանի ըոպէից կլաւդիոսը արդէն խոր քնով քնած էր, բայց Մօրիսի քունը չէր տանում, նրա գլխում գեղերում էին շատ խոկումներ:

ԳԼ. Զ.

Ն Ո Ր Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

Բոլորովին իւր ճաշակի համապատասխան բնակարան կառուցանելով՝ Մօդիէ ագարակատէրը ուզում էր մի ուրիշ նորը ևս կառուցանել, որին զնորհաւորելու համար հրաւիրուած էին բոլոր հարևանները:

Լուիզան նատած էր իւր սենեակում, որը շքեղ կերպով զարդարուած էր և ներկայացնում էր եկող տօնախմբութեան համար պատրաստած բոլոր զարդարուն պիտոյքները:

Ագարակատէրը ներս մտաւ նրա սենեակը:

— Դու մենակ ես, Լուիզա:

— Այս, մենակ եմ, հայրիկ, բայց ինչո՞ւ

համար ես հարցնում:

— Նրա համար, որ արդեօք պատրամստ ես դու մեր նոր բնակարանը տեղափոխուելու:

— Այսեն բան պատրաստ է, հայրիկ: Հագուստներս այնպէս գեղեցիկ ու յարմար են դուրս եկել, որ ես բոլորովին սպասել չէի կալող:

— Շատ ուրախ եմ, իմ թանկագին Լուիզա:

Այդ միջոցին դուռը բացուեց և ներս մտաւ Լուիզայի աղախինը, այն միւսովն թխա-

Հեր անձնուհին, որ սրանց ճանապարհորդութեան ժամանակ Լուիզայի հետ նստած էր:

—Պարոն Մօդլէյ, պարոն Կլաւդիոսը կամենում է ձեզ տեսնել, ասաց ներս մտնողը:

—Բայց նա այստեղ է, շատ էի փափագում նրան տեսնել, ասաց ագարակատէրը և սենեակից դուրս գնաց:

Լուիզան հօրը ճանապարհ դնելուց յետով ընկղմուեց մտածմունքների մէջ, որ տեղի տուեց հօր գալով:

—Տիրուհի, դուք դարձեալ մտածմունքի մէջն էք, նկատողութիւն արաւ աղախինը:

—Ո՛չ, Կլարա, այդ այնպէս է...ոչինչ... պատասխանեց Լուիզան:

—Սակայն, ես մի նոր բան եմ նկատում ձեզանում, աւելացրեց աղախինը:

—Ի՞նչ:

—Այն, որ դուք, ճանապարհին մեզ պատահած ձիւառին տեսնելու օրից սկսած, ըուլորովին փոխուել էք: Ո՞ւր է, այլ ևս չ'կայ առաջուայ ձեր անսահման ուրախութիւնը և զուարճութիւնը: Սրդեօք նրա հրապուրիչ գեղեցկութիւնը կախարդեց ձեզ. բայց ես ինչ եմ ասում, չէ որ նա բարի և առաքինի մարդ էր:

—Ո՛չ, Կլարա, երևում է, որ դուք զա-

ռանցանքների մէջն ես գտնուում: Դու այստեղ մնա, ես գնում եմ Կլաւդիոսին տեսնելու, տեսնեմ որ և է նոր բան կը հաղորդէ մեզ, ասաց Լուիզան և սենեակից դուրս գնաց:

—Բարեաւ քեզ, սրտիս հատորիկս և գեղեցկուհիս, արտասանեց Կլաւդիոսը երբ Լուիզան մտաւ այն սենեակը, ուր նստած էր Կլաւդիոսը նրա հօր հետ:

Լուիզան համեստութեամբ ողջունեց նըրան:

—Լուիզա, հիւրիդ հետ ժամանակ անց-կացրու, ասաց Մօդլէյը և դուրս գնաց:

—Ո՛չ, դուք աւելի շատ էք չքնաղ գեղեցկութեան մէջ պարուրուել, սիրելի Լուիզա, երևում է, որ այստեղ օդը ձեզ շատ օգտակար է, ձեր քնքոյշ կերպարանքը մի այնպիսի աննման և սքանչելի գեղեցկութեամբ է տոգորուած, որ իմ սրտի համար սոսկալի երևոյթ է դարձել, թէպէտ նա իմ մէջ իւր թարմութիւնը մի քիչ կորցրել է, ասաց Կլաւդիոսը:

—Իսկ դուք առաջուայ նման կատակախօս էք, սիրում էք շարունակ շողոքորդել, ասաց Լուիզան:

—Ո՞ւր է այստեղ շողոքորդութիւնը: Միթէ դուք չէք ուզում խոստովանուել, որ

ամբողջ աշխարհիս առաջին գեղեցկուհին էք,
հրճուաց կլաւդիոսը:

— Դէ, արդէն դուք ինձ գովելը չափա-
զանցութեան հասցըիք:

— Բայց գիտես, Լուիզա, թէ ինչու հա-
մար եմ եկել այսօր հայրիկիդ մօտ:

— Երեսի եկել էք ձեր հին ծանօթին
տեսնելու:

— Ներողութիւն, ոչ, մի ուրիշ գլխաւոր
պատճառ կայ:

— Ի՞նչ պատճառ:

— Ի հարկէ, գիտէք դուք, որ հայրդ խընդ-
րեց ինձ հոգալ այն գոյնզգոյն ձիու մասին:

— Գիտեմ:

— Հետեապէս ես հէնց նրա համար եմ
եկել, որ յայտնեմ թէ գեղեցիկ ձին արդէն
բռնուած է, ասաց կլաւդիոսը:

— Ո՛չ որքան ուրախ եմ այդ բանի առ-
թիւ, հրճուանքով ասաց Լուիզան:

— Աւելի ուրախ եմ ես, որ դուք շուտով
կը ստանաք այն, որը ճարելու համար այն-
քան աշխատում էիք, ասաց կլաւդիոսը:

— Հապա ձին որտեղ է գտնւում, հար-
ցրեց Լուիզան:

— Նրա մօտ, ով բռնել է դրան, պատաս-
խանեց կլաւդիոսը:

— Ինչպէս երևում է, դուք այդ պարո-
նին լաւ էք ճանաչում:

— Այո, ճանաչում եմ:

— Ո՞վ է նա:

— Նրա անունը Մօրիս է, պատասխանեց
կլաւդիոսը:

Այս խօսքերի վրայ Լուիզայի դէմքը այ-
լալուեց, բայց նա աշխատում էր զսպել իրեն
և անվրդով երևալ:

— Այդ ձին երբ կը բերէ ինձ մօտ, կլաւ-
դիոս: Միամիտ կացէք, որ հայրիկս նրա հա-
մար ոչինչ չի խնայիլ, ասաց Լուիզան, աշ-
խատելով իւր ձայնին անդորրութիւն տալ:

— Ուրեմն, առայժմ ցտեսութիւն, Լուի-
զա, հաջկաւոր է ինձ շտապել, գնամ հայրի-
կիդ գտնեմ, նրա հետ մի քանի կարեոր իրե-
կիդ վերաբերութեամբ խօսակցեմ և ապա իմ
ընդունակ հետեւից գնամ, ասաց կլաւդիոսը և
դուրս գնաց:

Լուիզան բոլորովին մենակ մնալով, իւր
մտածմունքներին լիազօր ազատութիւն տու-
եց, նրա բորբոքուած երեակայութեան մէջ
երեաց իւր վաղեմի ծանօթի պատկերը, որը
նրա վրայ մի տեսակ անբացատրելի կամք կամ
իշխանութիւն ունէր:

— Ո՛չ, չգիտեմ ինչու համար ինձ այն-

պէս սոսկալի է դառնում այն հանգամանքը,
երբոր մտածում եմ թէ ես նրան կրկին պէտք
է տեսնեմ, սակայն միւնոյն ժամանակ փափա-
գում եմ այդ տեսակցութեանը: 0՝, ինչպէս
ամուր է բարախում սիրտս: Լուիզան իւր
քնքոյշ ձեռքերով սեղմեց իւր ուժգին բա-
րախող սրտին, որպէս թէ նա այսպիսով ձեռ-
քը սրտի վրայ դնելով, կամենում էր արգե-
լէր նրա զարկը:

ԳԼ. Է.

Ն Ա Խ Ա Կ

Վերջապէս հասաւ ագարակատիրոջից նը-
շանակուած հանդէսի ժամանակը:

Շքեղ զարդարուած սենեակը հիւրերի
բազմութեամբ սկսեց լցուել, սիրայօժար տան-
տէրը բերկրալից սրտով ու գրկաբաց իւր հիւ-
րերի առաջն էր դուրս գալիս և ամեն կերպ
աշխատում էր, որ իւր շնորհաբեր հիւրերը
ուրախութիւն վայելեն:

Երիտասարդութիւնը համախմբուեց զար-
դարուած դահլիճը, որ շքեղ իրերով շռալա-
բար զարդարուած էր և հազարաւոր պատ-
րոյգներով լուսաւորուած. ամեն ինչ առա-
տութեամբ փայլում էր: Սակայն այս բոլոր
փայլը, այս բոլոր շռալ առատութիւնը ոչ մի

նշանակութիւն չունէր համեմատած Լուիզա-
լի չնաշխարհիկ գեղեցկութեան հետ, որ այս
հանդիսաւոր երեկոն, իւր չքնաղագեղ, պճնա-
զարդ և նրբակար հագուստի մէջ հրեշտակի
պատկեր արած սքանչելի տպաւորութիւն էր
թողնում բոլոր հրաւիրեալների վրայ: Ամ-
բողջ երիտասարդութիւնը զարմացած էր գե-
ղեցկուհի Լուիզալի վրայ, որ նոր էր եկել սրանց
աշխարհը. ամենքն էլ նախանձով նայում էին
նրան, խոստովանելով իրանց սրտում, որ Լուի-
զան իւր աննման գեղեցկութեամբ կը նսե-
մացնէ տեղացի բոլոր գեղեցկուհիներին:

Լուիզան աշխատում էր ամենքին սիրե-
լի լինել և քաղցը վարուել, սակայն նա տըխ-
րախտիծ տրամադրութեան տակ էր, որը
փարատելու համար ոչ մի կերպ չէր աշխա-
տում, որովհետև այդ անելու անձեռնհաս էր:

Ի՞նչ էր նորա տիրութեան պատճառը և
միթէ կարելի էր այս ուրախ ու զուարթ ա-
կումբի մէջ տիրել, մանաւանդ, խոստովա-
նելով, որ այդ աղմկալի տօնախմբութեան
թագուհին էր իսկապէս, որին ուղղուած էր
բոլոր երիտասարդների հայեացքը:

Չնայած այդ բոլորին, Լուիզան սաստիկ
տիրու էր: Այդ օրը առաւօտեան նա տեսակ-
ցութիւն էր ունեցել Մօրիսի հետ, որը բըռ-

նած ձիու մասին խորհրդածելու համար եկել էր նրա մօտ: Մօրիսը խնդրեց Լուիզային ընդունել այս ձին ի նշան յարդանաց, ի հարկէ, առանց որ և է դրամական գումարի:

Այս տեսակցութիւնը Լուիզայի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ: Դեռ առաջին տեսակցութեան ժամանակ Մօրիսի հետ, երբոր անապատում հանդիպեցին միմեանց, նրա սիրտը մի առանձին կերպով բարախում և թելադրում էր նրան, թէ այդ անձնաւորութիւնը մեծ նշանակութիւն պէտք է ունենայ նրա ապագայ կեանքի վրայ, թէ զուր չեն միմեանց պատահել: Այժմ էլ Լուիզան նորից տեսաւ Մօրիսին, համարեա թէ առանձնութեան մէջ, որովհետեւ հայրը զբաղուած էր տնալին հոգսերով, ուստի չէր կարող գալ Մօրիսի մօտ, իսկ Կլաւդիոսը, որ Մօրիսին բերեց ազարակատիրոջ տուն, ցանկանալով Մօդլէին տեսնել, գնաց նրան գտնելու: Այսպէս Լուիզային վիճակուեց մի առ ժամանակ առանձին մնալ իւր փայփայած անհատի հետ: Լուիզան տեսնում էր, թէ Մօրիսի աչքերը ինչպէս էին ալրւում մի առանձին հիասքանչութեամբ, երբոր վերջինս նայում էր իրեն վրայ, նրա սիրտը ուժգնապէս բարախում էր: Ահա այն վառուած հայեացքը կարծես զգում էր իւր

վրայ: Նրա համար Մօրիսի բացակայութիւնը անտանելի էր:

Կասսիլը նկատելով Լուիզայի թախծալի տրամադրութիւնը, մօտեցաւ նրան և սկսեց խօսել:

—Ի՞նչ է պատահել քեզ, Լուիզա:
—Ոչինչ:
—Սակայն դու տխուր ես:
—Բայց ձեզ ինչ փոյթ. գործ ունէք ինձ հետ:

—Ի հարկէ ունեմ, խրոխտաբար պատասխանեց Կասսիլը:

—Այդ ինձ զարմացնում է, ծաղրելով ասաց Լուիզան:

—Լսիր, Լուիզա... Ես վաղուց ցանկանում էի քեզ հետ խօսել, բայց տեսնում եմ, որ դու բոլորովին փոխուել ես իմ վերաբերմամբ, մինչդեռ ես ձեզնից սէր և տրփանք էի սպասում: Զը գիտեմ ինչ պատճառով քոյարաբերութիւնը ընդհատուած է ինձնից և օրէցօր սառնութեամբ ես վերաբերում, ասսինձ, ինչ է նշանակում այդ:

—Ես խնդրեցի ձեզ, Կասսիլ, որ դուք այդպիսի խօսակցութեան առիթ չտաք երբէք, ասաց Լուիզան:

—Ես, որպէս փեսացու, Կարծեմ իրա-

ւունք ունեմ ձեզնից բացատրութիւն պահանջելու, Լուիզա: — Ձեր հայրը վաղուց արդէն համաձայնութեան խօսք է տուել մեր ամուսնութեան համար, շարունակեց Կասսիլը:

— Հալրս չէ կարող հրամայել, որ ես ամուսնանամ նրա հետ, որին ես... և Լուիզան չկարողացաւ շարունակել:

— Դու ուզում էիր ասել, թէ ինձ չես սիրում:

— Այո՛, քեզ չեմ սիրում, խրոխտաբար և վճռական եղանակով պատասխանեց Լուիզան:

Կասսիլի դէմքը այլայլուեց:

— Միթէ այն ձիաւորը, որ անապատում ճանապարհ ցոյց տուեց, խոչնդոտ հանդիսացաւ, ոխակալութեամբ ասաց Կասսիլը:

— Մեզ վայել չէ նրա վրայ այդպէս խօսել, Կասսիլ, նա մեր կեանքի փրկիչն է, անազնութիւն է նրան խոչնդոտ համարել, տաքացած ասաց Լուիզան:

— Դու նրա ջերմ պաշտպանն ես, յանդիմանեց Կասսիլը:

Սակայն Լուիզան ուշադրութիւն չդարձրեց նրա վրայ, վերկտցաւ տեղից և անբաւականութեամբ հեռացաւ միւս կողմը:

— Այո՛, Լուիզան սիրում է նրան, յու-

զուած մտածում էր Կասսիլը. դառն նախանձը սկսեց տանջել նրան, երգուեց անպատճառ տապալել իւր ախոյեանին:

ԳԼ Բ.

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Անցել էր մի քանի օր և Լուիզան արդէն իւր փափագելի ձիուն տէր էր դարձել: Ագարակատէրը լսեց, որ Մօրիսը ձին բերել է: Այս լուրը նրան խորին հրճուանք պատճառեց: Ագարակատէրը անկեղծ շնորհակալութեամբ բաւականին խոշոր գումար առաջարկեց Մօրիսին, բայց սա դրականապէս հրաժարուեց:

Լուիզան տակաւին չէր կարողացել սքանչանալ Միւենայով և նրա գովելի յատկութիւնով զուարաճանալ: Լուիզան, որպէս հմուտ ձի հեծնող, այսպիսի անուն էր տուել իւր նոր ձիուն: Նա քաջութեամբ և աներկիւղ նըստեց նոր՝ համարեա վայրենի ու անզուսպ ձիու վրայ և շեշտակի արշաւեց դէպի շրջակա անապատը, որի լայնածաւալ տարածութիւնը միջոց տուեց երիտասարդուհի ձիաւորին՝ իւր ձին սլաքի պէս սուրեցնելու, որը նրա միակ զուարճութիւնն էր: Իսկ հիմա նրա սիրտը բերկը արանքով և զուարճութեամբ աւելի պարա-

ըուեց, որովհետև նա օդաչու արաբածի պէս, ձիու վրայ նստած, առաջ էր սլանում։ Այս ձին ձեռք էր բերել հեշտութեամբ նրա համար այն անձը, որին նա ամեն բանից շատ էր սիրում աշխարհում։ Անձնատուր լինելով իւր սիրելի անհատին տածելի խոկումներին, նա սլանում էր այնտեղ, ուր տեսնում էր, առանց նպատակակէտի։ Նրա բորբոքուած ձին իւր համար սահման չէր ճանաչում։

Բայց ահա, նրա հետեւում յանկարծ լսուեց ձիու ոտքի տրոփիւն։ Լուիզան կարծես ակամայ յետ նայեց, որովհետև նրան մի զօրութիւն քաշում էր դէպի իրեն։ Նա տեսաւ, որ իւր փարելի էակը արագապէս դէպի ինքն է դալիս, ակամայ նա սոսկաց։

—Կարծեմ երկար ժամանակ է, որ դուք դուրս էք եկել այս անապատում զբօսնելու, հարցրեց Մօրիսը հասնելով լուիզային և սրա վրայ կենդրոնացնելով իւր հայացքը։

—Ո՛չ, ես նոր դուրս եկայ, պատասխանեց լուիզան։

—Ես տեսալ, երբոր դուք ձին նստած ձեր բնակարանից դուրս եկաք, ասաց Մօրիսը։

—Հապա դուք ինչպէս տեսաք ինձ, ուր էիք, զարմացած հարցրեց լուիզան։

—Ես հաւասարի գիտէի, որ դուք, որպէս

ձի հեծնելու սիրահար, անշուշտ կը գնայիք մի փոքր զբօսնելու ձիով, կը ցանկանայիք փորձելու ձեր նոր ձին և վախենալով թէ մի գուցէ որ և է վտանգի մէջ ձգէ ձեզ այս անգուսալ ձին, հետամուտ եղայ ձեր ընթացքին։ Դուք հէնց որ դուրս եկաք ձեր տնից, ես իսկոյն հետեւեցի ձեզ, սակայն երբոր գնացի վերցնելու, դուք արդէն աչքիցս անյատացել էիք։ Ես ստիպուած եղայ երկար ճանապարհ կտրել, մինչև որ կարողացայ ձեզ գտնել, ասաց Մօրիսը։

Լուիզան այս խօսակցութեան վրայ սակաւ մի յուղուեց և յետոյ քիչ ամոքելով՝ ըսկեց խօսել։

—Ասացէք ինդրեմ, ինչո՞ւ համար էիք աշխատում անպատճառ հետեւիցս հասնել։

—Ես արդէն ասացի ձեզ, որ վախենում էի, թէ մի գուցէ ձին վայր գլորէ ձեզ թամբից։

—Հետեւապէս դուք ցանկութիւն ունէք ինձ երկրորդ անգամ մահուանից ազատելու։ Օ՛, դուք որքան բարի մարդ էք, Մօրիս, համարեա բարձր ձայնով ասաց լուիզան։

—Հոգեակս, ես այս գէպքում ոչ մի բարութիւն չեմ տեսնում, ես միայն կատարում եմ այն, ինչ որ անհրաժեշտ է անելու ամեն մի իսկական և օրինաւոր մարդ։

— Դուք չափազանց համեստ անձնաւուրութիւն էք, Մօրիս, բայց այսուամենայնիւ թույլ տուեցէք ձեզ յայտնելու իմ խորին շնորհակալութիւնը ձեր դէպի մեզ ունեցած նուիրական ցանկութեան համար և իւր սիրունիկ ձեռքը մեկնեց դէպի նա:

Մօրիսը հիացմամբ և բերկրանքով բռնեց նրա քնքոյշ ձեռքը, տարաւ դէպի իւր շրթունքները և խանդակաթ համբոյըներ դրոշմեց:

Այս ժամանակ հեռւում մի քանի վայրենի ձիեր երևեցան. ձիերը ուղիղ դէպի նըրանց էին գալիս:

— Մեզ վտանգ է սպառնում, ասաց Մօրիսը:

— Ի՞նչ վտանգ:

— Սարսափելի և անխուսափելի:

— Շուտ ասացէք:

— Այդ վայրենի ձիերը շեշտակի դէպի մեզ են գալիս:

— Միթէ վտանգաւոր է այդ:

— Ի հարկէ:

— Ինչո՞ւ, չեմ հասկանում ես, բացարեցէք ինձ մանրամասնաբար:

— Անշուշտ նրանք կը յարձակուեն մեր ձիերի վրայ, որ ապիկար կը լինեն նրանց դի-

մադրել. սրանց մէջ մի մաքառումն կըսկսուի, որի հետևանքից մէկ էլ այն կը լինի, որ ձեր ձին վայը կը գլորէ ձեզ թամբից.... ահա մի նոր աղէտ ձեզ համար:

— Ո՞, դուք դրա համար էք մտածում, միամիտ եղէք. ես թամբի վրայ կարող եմ ամուր մնալ:

— Այդ մի ասէք դուք, որովհետև դեռ չգիտէք թէ ինչ է նշանակում վայրենի ձիերի յարձակումը, ասաց Մօրիսը:

Լուիզայի մոլեգնացած ձին արգէն զգում էր վայրենի ձիերի մօտենալը, նա սկսեց սարսափելի փոնդալ, Լուիզան ճիգ թափեց զըսպել նրա կատաղութիւնը, սակայն այս փորձը անյաջող եղաւ, կատաղի ձին մէկուսի նետուեց և շեշտակի արագութեամբ առաջ սուրաց նետի պէս: Լուիզան բոլորովին անջատուեց Մօրիսից ահագին անջրպետով:

Մօրիսը նախատեսնում էր Լուիզային սպառնացող վտանգը: Նա մի առանձին տագնապի ազգեցութեան ներքոյ իւր ձիուն խթան տալով ընկաւ նրա հետեւից: Մօրիսը հասաւ այն վայրը ուր ընկած էր Լուիզան և սարսափելի սոսկաց, տեսնելով Լուիզային ձիութամբից գետինը գլորուած. նա գիտակցութիւնից գուրս էր:

Մօրիսը հապճէպով վայր իջաւ ձիու թամբից, խոնարհուեց անզգայ օրիորդի վրայ և բարձրացնելով նրա ձեռքը սրտատրովի դիտում էր նրա զարկերակը, որպէս զի համազուի, թէ նա կենդանի է: Մօրիսը մի կերպ անցկացրեց մի քանի տաժանելի ըոպէներոնա ոչ մի հնար չունէր իւր փարելի էակին գիտակցութեան մէջ բերել, մնացել էր միայն մի ելք, թողնել ճակատագրի կամքին և սպասել, որ ուշագնացութիւնը ինքն իրեն անցնէ: Վերջապէս ահա, Լուիզան ծանր շունչ քաշեց և աչքերը կիսաբանալով սկսեց նայել դէպի այն կողմը, ուր ինքը տապալուել էր: — Հանդարտուեցէք, ի սէր Աստուծոյ, հանդարտուեցէք, ասացէք, գիտակցում էք ձեզ, ասում էր Մօրիսը խոնարհուելով նրա վրայ:

— Ես այժմ ինձ լաւ եմ զգում, բայց ուր է ձիս, կամացուկ ձայնով ասաց Լուիզան: — Նա կը գտնուի, կարող էք բոլորովին միամիտ մնալ, միայն դուք աշխատեցէք չ'յուզուել, որ վնասակար ազդեցութիւն կարող է ունենալ տկարութեանդ վրայ, սփոփում էր Մօրիսը:

Լուիզան, ինչպէս երեսում էր, ուզում էր կամաց կամաց վեր բարձրանալ, սակայն նրա

տկարութեան թուլութիւնը արգելք էր լինում այդ բանին: Մօրիսը ընդգրկեց նրան: Լուիզան իւր տաժանուող գլուխը լենեց նրա ուսին:

Մօրիսը ամուր ընդգրկեց օրիորդի իրանը, որի ձեռքերը զղաձգութեամբ սեղմուած էին: — Ո՛հ, ինչպէս պատահեց, որ ես այս անսպասելի արկածից վախեցայ և չկարողացայ թամբի վրայ մնալ, սկսեց խօսել Լուիզան մի քիչ ուղղուելով:

— Անկարելի էր, որ դուք թամբի վրայ կարողանայիք մնալ, ձեր ձին մի այնպիսի ուտիւն գործեց, որ դուք չէիք կարող վայր գլորուելուց ազատ մնալ:

— Ո՛հ, ինչ կը լինէր իմ ճարը, եթէ դուք այստեղ չգտնուէիք, մի ինչ որ ահ ու դողով ասաց Լուիզան, նետելով Մօրիսին մի գուրգուրալի և շնորհակալութեան զգացմունքով լի հայեացք:

— Լուիզա, ձեզ անմատչելի է ըմբռնել այն զգացմունքը, որի ազգեցութեան տակ այս ըրոպէին տրոփում է սիրտս, միևնույն ժամանակ խոստովանուելով, որ իմ ձեր վրայ գործ դրած ջանքը այնքան էլ մեծ չէ, ասաց Մօրիսը:

— Եւ դուք ձեր ծառայութիւնը փոքը էք համարում, զարմացած ասաց Լուիզան:

—Ի հարկէ, ի հարկէ Լուիզա, եթէ կեանքս անգամ նուիրէի ձեր կեանքի վրկութեան, այնուամենայնիւ, ես ինձ զոհ չէի համարիլ: Կեանքդ զոհես վեհանձնաբար նրա համար, որին սի.... Մօրիսը յանկարծ կանգառաւ, կարծէք վախեցաւ այն բանից, որին փափագում էր: Նրա դէմքը այրուում էր, իսկ հայեացքը այնպիսի մի աննկարագրելի նուիրական սէր էր արտայայտում, որը Լուիզայի հոգին թափանցելով լուսաւորում էր: Լուիզան այնպիսի սփոփանք էր զգում, որ նմանը ամբողջ կեանքում չէր տեսել:

—Լուիզա, թոյլ տուեցէք մի խօսք ասելու ձեզ, որ այսքան ժամանակ բորբոքում է սրտումս և ուզում է կրծքատախտակս ճեղքել գուրս գալու համար, խանդաղատանքով ասաց Լուիզան:

—Ասացէք,

—Ասելուց յետոյ դուք ինձ չէք անիծիլ:

—Անիծիլ: Մօրիս, միթէ ուզում էք դուք ինձ վիրաւորել այդպիսի զարհուրելի խօսքերով, ասաց Լուիզան, վաղօրոք իմանալով թէ ի՞նչ պէտք է ասէ Մօրիսը:

—Օ՛, Աստուած իմ, ազատիր ինձ այս նեղ վիճակից, միթէ ես կարող եմ վիրաւորել

այն էակին, որի անձնաւորութիւնը կեանքից թանկ է. Լուիզա, սրտակից Լուիզա, ես քեզ սիրում եմ ամբողջ հոգւով և մարմնով, սիրում եմ այնպէս, որպէս ոչ ոք չի սիրել ոչ մի ժամանակ, ոգեսորուած խօսեց Մօրիսը, օրիորդի դիմացը ծունկ չոքելով:

—Ի՞նչ, ի՞նչ բան եմ լսում, նուազած ձայնով ասաց Լուիզան, երեսը ձեռքերով ծածկելով:

—Օ՛, Լուիզա, իմ դէպի քեզ տածելի սէրը մի ժիտիր, ես մեծ բաղդաւորութիւն պատճառող կարող եմ լինել, ես քո ստրուկը կը դառնամ, թող ես քո ստորագրեալը լինեմ բոլորովին, միայն թէ ինձ մի հեռացնիլ քեզնից, ինձ համար առանց քեզ կեանք չկայ:

—Մօրիս, ես ևս քեզ ջերմագին սիրում եմ, մեր առաջին հանդիպած ժամանակից սիրուս քո սեպհականութիւնն է դարձել, պատասխանեց Լուիզան և ամօթխածելով իւր նրան ասած խօսքերից, չքնաղագեղ կարմրած երեսը ծածկեց նրա ուսի հետեւում:

Մօրիսը ամուր բռնեց Լուիզայի գեղեցկատիպ իրանը, նրա հրացալաւ շրթունքները կպել էին գեղեցկուհու նրբակազմ այտերին:

ԳԼ. թ.

Վ Ճ Ռ Ա Կ Ս Ն Հ Ր Ա Ժ Ա Ր Ո Ւ Մ

Լուիզալի մէջ նկատում էր սարսափելի փոփոխութիւն, նրա գեղահրաշ փոքրիկ երեսից փարատուել էր առաջուայ այն հիւծիչ թախիծը, որ մինչև այժմ էլ նրա վրայ դրոշմուած էր: Նա դարձել էր կրկին նախկին աշխոյժ և գուարթերես Լուիզան: Նրա այս փալուն տրամադրութիւնը սակաւ ուրախութիւն չէր պատճառում իւր հօրը և Կասսիլին դարմացնում, որը այս երեսով բացատրում էր յօդուտ իւր նպատակին:

— Լուիզան արդէն մոռացել է այն անպիտանին, ձի հեծնելը նրան գրաւել է, որին այնքան մեծ փափագ է զգում: Հարկաւոր է օգտուել այս յարմար ժամանակից և լրջապէս պատշաճառոր գործերին ձեռնամուխ լինել: Այսպէս էր մտածում Կասսիլը մի գեղեցիկ երեկոյ պատահելով Լուիզային, որ անապատից էր վերադառնում, ուր նա մի քանի ժամ շարունակ ձիարշաւ էր կատարում: Նա վերադառնում էր ուրախ և անհոգ, քաղցր ժըմիտ բարակ շարակ շրթունքներին խաղացնելով:

Այս, այս երեկոյ նա մի առանձին հոգեպարար և ցնծաւէտ տրամադրութեան մէջ

էր գտնւում: Նա իւր սովորական տեսակցութիւնն ունէր այն գեղեցկութեան հերոսի հետ, որին այնպէս ջերմ և անկեղծաբար սիրում էր: Այս երեկոյ նա Մօրիսի հետ պայմանաւորուել էր, որ անհրաժեշտ է իւր հայրենի տնից փախչել և գաղտնի պսակուել, որովհետեւ հայրը բոլորովին համաձայն չէր նրանց պըսակին:

Լուիզան այնպիսի մի նշանաւոր ընտանիքի զաւակ էր, շատ կալուածների տէր, իսկ Մօրիսը... Նա աղքատ էր, աննշան տոհմից և ընտանիքից, թափառական կեանք փարող մի անձնաւորութիւն: Հապալ մէթէ նրա հայրը սրանց ամուսնութեանը համաձայն կը լինէր, ուստի փախուստ տալը անհրաժեշտ էր:

— Դու չափազանց շատ ես զբունում ձիով, Լուիզա, այդ կարող է քեզ յոգնեցնել, նկատեց Կասսիլը, երբոր Լուիզան տուն վերադարձաւ:

— Ընդհակառակը, զբօսանքը ինձ աւելի է ամրացնում և ոյժերս կազմուրում, բաւականին փաղաքշանքով ասաց Լուիզան:

— Լուիզան բոլորովին փոխուել է. նա արդէն ինձ հետ մտերիմ և փարելի յարաբերութիւնների մէջ է մտել, ինչպէս երեսում է, նա ափսոսում է ինձ այժմ, կը գնամ հօրեղ-

բօրս մօտ և ամեն բանի վերջ կը դնեմ, մտա-
ծում էր Կասսիլը: Լուիզան երբ նրա աչքից
հեռացաւ, Կասսիլը մտաւ հօրեղբօր սենեակը:

— Ի՞նչ է պատահել քեզ, Կասսիլ, երե-
ւում է, որ դու մի բանից յուզուել ես, երե-
սրդ շատ է գունաթափուել, ասաց ադարա-
կատէրը իւր ազգականին, երբ վերջինս ներս
մտաւ նրա սենեակը:

— Կարող է պատահել, հօրեղբայլը, ես
եկել եմ քեզ հետ մի շատ կարեոր գործի մա-
սին խօսելու, որ մեզ երկուսիս է վերաբերում,
ասաց Կասսիլը:

— Ասա՛, ի՞նչ նոր բան կայ:

— Ես շատ եմ փափագում, որ մեր ա-
մուսնութիւնը Լուիզայի հետ որքան կարելի
է շուտ լինի, խօսեց Կասսիլը:

— Սիրելիս, այդ բանը Լուիզայից է կա-
խուած, դրա մասին նա ի՞նչ է ասում:

— Ես շատ կը խնդրէի ձեզանից, որ Լուի-
զային կանչէիք այստեղ հինգ այժմ և առա-
ջարկէիք այս հարցը:

— Շատ լաւ:

Մի քանի ըսպէից յետոյ Լուիզան մտաւ,
Հօր սենեակը, նա այս երեկոյ մի չնաշխարհիկ
գեղեցկութիւն էր ստացել:

— Որդեակ իմ Լուիզա, ցանկանում եմ

քեզ հետ մի քիչ խօսել մի գործի մասին, որ
շատ վաղուց սկսուած է, սակայն զանազան հան-
գամանքների շնորհիւ մինչև այժմ վերջացրած
չէ, ասաց ծերուկը փալփալով իւր աղջկան:

— Ի՞նչ կայ, հայրիկ, ասա տեսնենք:

— Ես և Կասսիլը ուզում ենք, որ քո ա-
մուսնութիւնը շուտ կատարուի, կարծէք երկ-
մտօրէն խօսեց ծերուկը:

— Ամուսնութիւն... ի՞նչ ամուսնութիւն:

— Ի հարկէ քոնը, հոգեակս: Դու գիտես,
որ Կասսիլը քեզ շատ է սիրում, շատ...

— Այդ ամուսնութիւնը երբէք իրակա-
նանալ չի կարող, հայր, խոժոռած դէմքով
պատասխանեց Լուիզան:

Այս խօսքերի վրայ Կասսիլի երեսը գունա-
տուեցաւ և մեռելային կերպարանք ստացաւ:

— Լսիր, Լուիզա, դու գիտես, որ այդ
իմ անկեղծ ցանկութիւնն է: Ինձ համար շատ
ուրախալի երեսոյթ է տեսնել քեզ Կասսիլը
գարձած: Ես երբէք չէի կարծում, որ
դու քո հօր խնդիրը կարող էիր մերժել և
խորին վիշտ պատճառել ծերուկիս:

— Հայր, թանկագին հայր, եթէ քո հայ-
րական սրտում մի չնչին սիրոյ կայծ կայ գէ-
պի ինձ, ապա դու այլ ես ալդպիսի տհաճ
բանի մասին խօսք չես կարող բանալ ինձ

Հետ: Դարձեալ կը կնում եմ, հայր, որ այդ հարսանիքը ոչ մի ժամանակ չի կարող իրականանալ, հակառակ դէպքում, դու ինձ աւելի շուտ գերեզմանի մէջ կը տեսնես, քան թէ Կասսիլի հետ պսակուած, ասաց Լուիզան և շտապով դուրս գնաց սենեակից:

Լուիզայի հետեւից Կասսիլը մի այնպիսի հայեցք նետեց, որ հազար նզովք էր արտայայտում. նա զարհուրելի էր դարձել այդ դառն ըոպէում:

— Արդեօք ի՞նչ կարող եմ անել այժմ ես, մի արտաքոյ կարգի տիրութեամբ ասաց ծերուկը:

— Օ՛, ես գիտեմ, ես գիտեմ նրա հրաժարուելու պատճառը, մոլեգնաբար ասաց Կասսիլը:

— Միթէ մի առանձին պատճառ կայ: Ես կարծում եմ, որ այստեղ միակ պատճառը այն է, որ Լուիզան, օժտուած լինելով կամոկոր բնաւորութեամբ, չէ ուզում ամուսնանալ նրա հետ, որին ես եմ մատնացոյց անում, բայց որ նրա սիրող ամեն բանից գերծ է, այդ ես համոզրւած եմ, ասաց ծերուկը:

— Իսկ ես ձեզ կը հաւատացնեմ, որ քո այդ համոզմունքը սխալ է, սուր կերպով ասաց Կասսիլը:

— Ո'չ... բայց ո՞վ է նա, որի վրայ սիրահարուած է:

— Այն ձիաւորը, որ մեզ պատահեց ճանապարհորդութեան ժամանակ, բարկացած ասաց Կասսիլը:

— Հա, հա, հա, շատ լիմար բան ես մըտածել:

Բայց Կասսիլը այլ ես նրա սենեակումը չէր, նա խելագարի պէս նետուեց իւր սենեակը, և ուժասպառ ընկաւ պատահած առաջին աթոռի վրայ և՝ յուսահատութեամբ գոչեց. «Ես նրան յաւիտեան կորցըի, սակայն վրէժինդրութիւնը, սարսափելի վրէժինդրութիւնը կը փոխարինէ իմ սրտում նրա սիրոյ տեղ»:

ԳԼ. Ժ.

ԵՂԵՐՆԱԹԻՒՐ ՆՊԱՏԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ

Ագարակատիրոջ բնակավայրից մի քանի մզոն հեռաւորութեան վրայ հոսում էր մի փոքրիկ, բայց սարսափելի խորութիւն ունեցող գետ, որի վրայ ձգուած էր մի հինաւուրց կամուրջ: Այս կամուրջի շուրջը տարածուած էին նշանաւոր և մօտակայ բնակիչների վրայ ահոելի տպաւորութիւն թողնող վայրեր, այնպէս որ շատերը չէին վստահանում գիշերները այդ կամուրջի վրայով միայնակ անց-

նել դէպի միւս ափը, ասելով, թէ այդտեղ
ապրող սատանաները անպատճառ կը բռնեն
և կը տանեն իրանց կացարանը նրան, ով գի-
շերուայ կիսում կը համարձակուի այդ կա-
մուրջով անցնել:

Պահապանները այս սոսկալի կամուրջի
մասին պատմում էին հետևեալ աւանդութիւ-
նը, որ իբր թէ մի անյայտ ժամանակ, շատ-
դարեր առաջ, երբ որ ոչ թէ այժմեան բնա-
կիչները, այլ և սրանց պապերը գոյութիւն
անդամ չունէին, այդ կամուրջից գետը նետուեց
մի օրիորդ, որ հօրից նզովուած էր: Սատա-
նան օրիորդին հրճուանքով ընդունեց իւր
բնակարանը, որպէս մի դժուարագիւտ որս:
Ահա այդ ժամանակից սկսած գիշերը այդ կա-
մուրջով անցնելը անկարելի էր դարձել երթե-
ւեկողների համար, որովհետև անբաղդ օրիոր-
դի սարսափեցուցիչ գոչիւնը սատանայի տան-
ջանքներից շարունակ լսելի էր լինում և սատա-
նայի դժնալուր ծիծաղը ամենքի վրայ արհա-
պիրք էր թողնում, որը իւր ճանկերի մէջ
ամուր բռնած էր թշուառ օրիորդին:

Լուիզան էլ այդ աւանդական պատմու-
թեան մասին լսել էր, սակայն ի հարկէ, սար-
սափելի ծաղրելով դրա վրայ: Նա բոլորովին
չէր հաւատում այդ զարդարուն առասպելին

և որպէս զի ապացուցանէ նրա առասպելու-
թիւն լինելն ու ժողովրդի սնոտիապաշտու-
թեան գաղափարը, նա մի քանի անգամ ան-
ձամբ ձիով գնաց այդ գետի կանաչազարդ-
ավը և անցաւ զարհութելի կամուրջի վրայով.
գնում էր այն ժամանակ, երբ որ գիւղում
բոլոր բնակիչները հանգիստ քուն էին վայե-
լում: Վերջին ժամանակներում Լուիզայի հա-
մար այդ կամուրջը ամենասիրելի և ամենա-
զուարձալի զօսարան էր դարձել, որովհետև
այդտեղից երեսում էր այն փոքրիկ տնակը,
որի մէջ Մօրիսը ապրում էր: Մօրիսը նստում
էր իւր անշուք խրճիթի պատուհանում և ան-
համբեր սպասում Լուիզայի որոշած տեսակ-
ցութեան, աչքերը յառելով դէպի իւր պաշ-
տելի էակի գալու ճանապարհը: Մօրիսը ամեն
ժամանակ Լուիզային մօտենալիս՝ առաջն էր
դուրս գալիս:

Կասսիյը վրէժինդրութեամբ տոգորուած
սկսեց ամեն տեղ գաղտնի հետամուտ լինել
Լուիզային:

Մէկ անգամ, երբոր արեգակն արդէն
սկսել էր թէքուել դէպի արևմուտք, Լուի-
զայի մօտ բերեցին մէկ ճեպընթաց թամբած
ձի, օրիորդը արագութեամբ բարձրացաւ, նըս-
տեց թամբի վրայ և նետի պէս առաջ սուրաց:

Կասսիլը, որի ձին արդէն պատրաստ էր, ճեպով ընկաւ Լուիզայի հետևից, բայց այնպէս, որ Լուիզան չ'կարողանար նկատել իւր հակառակորդին:

Լուիզան կամուրջն անցնելով, շուտով վայր իջաւ ձիուց, գրավանից հանեց սպիտակ դրօշակը և մի քանի անգամ նրանով հովահարեց իւր գլուխը, ապա կըկին գրավանը դնելով դրօշակը քայլերով առաջ գնաց:

Անցաւ մի քանի րոպէ և ահա յանկարծ նրա դիմաց կանգնած էր Մօրիսը: Լուիզան այժմ Մօրիսի հետ էր: Այս երկու սիրահարների ընդգրկութիւը և սրանց փոխադարձ համբոյըները դժուար է նկարագրել: Սրանց խընդարակութիւնը նկարագրելի սուրբ և երջանկութիւն էին արտայատում: Այս բոլոր երեսով դիտում էր Կասսիլը իւր սրատես աչքերով: Նա, որպէս մի կատաղած վագր, պատրաստ էր յարձակուելու իւր ախոյեանի վրայ, նրան պատառ պատառ անելու նսլատակով, սակայն տւաղ, նա ինքը խոստովանում էր իւր թուլութիւնը նրա նկատմամբ: Նախանձը և չարիքը խեղագում էին նրան: Կասսիլը բազմաթիւ նզովքներ էր կարդում Լուիզային, որը չ'կասկածելով նրա չար միտումները, միամտաբար վա-

յելում էր իւր սիրային բարեբաստիկ րոպէներ: — Օ՛, սրտակից և թանկագին իմ Լուիզա, քո քաղցը ներկայութիւնը ինձ համար անհրաժեշտ է դարձել, որպէս օդը, առանցքեզ ես ոչ մի րոպէ չեմ կարողանում ժամանակ անցկացնել, ես սարսափելի տանջում ու մաշտում եմ քո բացակայութեան ժամանակ: Խնդրեմ ասա, երբ պէտք է միանայ մեր սըրտերը ամուսնական սուրբ կապով ընդ միշտ, հրճուանքով խօսում էր Մօրիսը կըծքին սեղմելով իւր փոքրիկ չքնաղ գեղեցկուհուն:

— Այս, որքան շուտ, այնքան լաւ, այդ պէտք է ալդպէս լինի, այլապէս մենք կը կորչենք, ասաց օրիորդը:

— Ի՞նչ է նշանակում այդ, քո խօսքերը վախեցնում են ինձ, Լուիզա:

— Կարծեմ, սկսել են ինձ հետամուտ լինել. Հայրս կասկածում է, որ իմ ձիով ճանանել. Հայրս կասկածում է, որ իմ ձիով ճանանել. Հայրս կասկածում է, որ իմ ձիով ճանանել. Հայրս կասկածում է, որ իմ ձիով ճանանել.

— Ուրեմն, Բնչ պէտք է անել:

— Հարկաւոր է շուտ փախչել:

— Այս, այդ անհրաժեշտ է, ուրեմն և օր նշանակիր, Լուիզա:

— Երեք օր սպասենք, այնուհետեւ մեզ ոչ չի կարող անջատել, վճռեց Լուիզան:

— Ուրեմն, դու երեք օրուանից յետոյ այստեղ կը լինես և մենք միասին կը փախ-չենք. մենք յաւիտեան կը միանանք, բերկրան-քով գոչեց Մօրիսը:

— Այո՛, յաւիտեան կը միանանք, թան-կագինս իմ:

Նորից միմեանց մատակարարեցին ջերմ համբուրներ:

— Մնաս բարեաւ, թանկագին մտերիմս իմ, ես պէտք է գնամ: Այս երեք օր քեզ այլ ևս չեմ տեսնիլ: Ես ուզում եմ շուտ գնալ տուն, որպէս զիմեր տնեցիներին տեղիք չտամ իմ վրայ բեւը կարծիքներ կազմելու: Երեք օրուանից յետոյ՝ ուղիղ կէս գիշերին, երբոր մեր տանը բոլորը հանգիստ քնած կը լինեն, ես ձի կը հեծնեմ և կը փութամ քո մօտ, ի հարկէ, մեր տնից գաղտնի վերցնելով իմ բոլոր թանկագին իրերը, ինչպէս զարդարան-քըս ու թանկագին քարերս, որոնք մեզ շատ պէտք կը դան:

Լուիզան ցատկեց ձիու թամբը և ծած-կուեց Կասսիլի տեսութիւնից:

— Հա՛, հա՛, հա՛, արձագանք տուեց Կաս-սիլի չարախնդաց և հեգնական ծիծաղը Լուի-զայի հետեւից: — Դու կարծում ես, որ ես կը թողնեմ քեզ ամուսնանալ այդ անպիտանի

հետ: Ո՛չ, Լուիզա, ո՛չ, դու տակաւին չ'գիտես ի՞նչ բան է նախանձը: Ես քեզ սիրում էի այն-պէս, որպէս ոչ ոքին այսուհետև չեմ սիրելու, սակայն այդ սէրը, այդ վառ զգացմունքն ին-ձնից չքացաւ, այժմ սրտումս անշիշանելի վրէժինդրութիւնն է բնակութիւն հաստատել: Ահա այս վրէժինդրութիւնը քեզ համար պատ-շաճաւոր վարձատրութիւն է պատրաստում, անգութ Լուիզա, կրած տառապանքներիս ա-ղագով, որոնց ազգեցութեան տակ ներկայումս ես հեծում եմ: Նզովուած լինի, նզովուած լինի այն չարագործը. ատամները կրճացնե-լով ասաց Կասսիլը և մըրկի մէջ ձիուն առաջ սլացրեց, ինքն էլ չիմանալով թէ ուր, բայց իմաստուն ձին շուտով իր բնակարանը հասցրեց:

Կասսիլը սարսափելի տանջւում էր:

ԳԼ ԺԱ.

ՍԿԻԶԲԻ ԱՐԱԾԻ Է

Կասսիլի գրութիւնը անտանելի էր: Ամ-բողջ գիշերը չկարողացաւ քնել, որի պատ-ճառով և նեարգերը թուլացել էին: Ամբողջ գիշեր նա ընկղմուած էր դառն խոկումների մէջ. նրա երեսը գունաթափուել էին, աչքե-րըն արիւնով լցուել, սոսկալի վիճակի մէջ ա-լեկոծւում էր:

— Ի՞նչ է պատահել քեզ, Կասսիլ, Հարցուց ներս մտնող Հենրիկոսը:

— Ե՛, Հենրիկոս, դու Էլ ես Հարցնում, միթէ դու չես կարողանում հասկանալ իմ տրամադրութեան պատճառը, պատասխանեց Կասսիլը:

— Ճշմարիտ, չեմ հասկանում:

— Ես մերժուած եմ, ինձ հետ այնպէս են խաղում, որպէս մի խաղալիքի հետ, լքուած եմ ես ինչպէս մի անպիտան իր, բորբոքուած ասաց Կասսիլը:

— Ես բոլորովին ոչինչ չեմ հասկանում քո ասածից, Կասսիլ, ասաց Հենրիկոսը Հայեացքը կենդրոնացնելով Կասսիլի յուզուած դէմքի վրայ, որ կատաղութիւնից հետզհետէ մուալլում էր:

— Միթէ հայրդ ոչինչ չի ասել քեզ, Հարցըց Կասսիլը:

— Ո՛չ, ոչինչ չէ ասել:

— Երէկ Լուիզան վճռականապէս յայտնեց, որ չէ ուզում կինս լինել, զայրացած խօսեց Կասսիլը:

— Լաւ, դորանից ի՞նչ: Մի քիչ մտածիր, Կասսիլ, միթէ նա յանցաւոր է, երբ չէ սիրում քեզ: Լուտ իմ կարծեաց, նա շատ յարգանքով է վերաբերում, նա ցանկութիւն չունի

ոչ քեզ և ոչ իրան դժբաղդացնել, սառնասը մտութեամբ ասաց Հենրիկոսը:

— Սակայն, դու գիտես նրա հրաժարուելու պատճառը, ծաղրելով ասաց Կասսիլը:

— Ես հէնց նոր ասացի պատճառը, որ նա քեզ չի սիրում:

— Իսկ ուրիշին սիրում է:

— Ալդ ես չ'գիտեմ:

— Բայց ես գիտեմ:

— Հապա ումն է սիրում, ասա խնդրեմ, այդ ինձ շատ հետաքրքիր է:

— Այն անպիտան թափառականին, այն աղքատին.... Նա Մօրիսին է սիրում:

— Բաւական է, որ այդպիսի լիմար-լիմար բաներ խօսես, ինչպէս եղաւ որ դու գլուխումդ կարողացար մի ալդպիսի միտք ծնեցնել, խնդրալով ասաց Հենրիկոսը:

— Ես քեզ հաւատացնում եմ, Հենրիկոս, որ այդ ճշմարիտ իրողութիւն է:

— Ինչով կարող ես ապացուցանել այդ:

— Նորանով, որ ես անձամբ ականատես եղալ նրանց տեսակցութեան սատանաների կամուրջի մօտ, ասաց Կասսիլը:

— Դու չես խաբում ինձ, Կասսիլ, Հարցըց Հենրիկոսը գունատուելով:

— Ճշմարիտն եմ ասում քեզ, պատարստ

Եմ մինչև անդամ ինձ համար ամենաթանկագին բանով երդուել:

Հենրիկոսը մտածութեան մէջ ընկաւ:

—Միթէ դու դէպի այդ գործը անտարբեր կը գտնուես, միթէ դու, որպէս եղբայր, նրա գլուխը չես թոցնիլ, հարցրեց Կասսիլը:

—Ես նրան իմ սեպհական ձեռքերովս կը խեղճեմ, իսկ Լուիզային կը խնայեմ, եթէ մեզ հետ լինի նա, ասաց Հենրիկոսը:

—Ուստի ես յոյս ունենամ, որ դու որպէս բարեկամս և պաշտպանս վրէժինդիր կը լինես այդ չարագործից:

—Այն, այն, ես վրէժինդիր կը լինեմ, ահա այս ձեռքովս:

Կէս գիշերից բաւական անց էր, երբոք սրանք բաժանուեցին և տխուր մտքերը սրանց գլխում բուն էին դրել:

ԳԼ. ԺԲ.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔՐՈԶ ՀԵՏ

Այս տեղեկութիւնը ստանալուց յետոյ, Հենրիկոսը կարեոր համարեց սոյն գործի մասին քրոջ հետ խօսել: Նա այնպէս էր սիրում Լուիզային և նրա ամեն մի գաղտնիքն այնպէս էր յալտնի իրեն, որ բոլորովին չէր կարող ենթագրել, թէ Լուիզան իւր սիրելի քոյ-

րը, յարաբերութիւն կունենալ մի ինչ որ անյայտ մարդու հետ: Լուիզան եղբօր հետ միշտ բաց սրտով էր խօսում, նա իւր սրտի գաղտնիքներից ոչ մէկը չէր ծածկում նրան յայտնելուց, ուստի Հենրիկոսը բարուոք համարեց ուղղակի քրոջ հետ խօսել այդ մասին: Հենրիկոսը այս դիտաւորութեամբ մտաւ քրոջ առանձնասենեակը և նրան այնտեղ չգտնելով՝ հարցրեց խոհարարին և նրանից իմացաւ, որ գնացելէ հարկան անտառում զբունելու:

Հենրիկոսը երկար չփնտուեց քրոջը. նա գիտէր անտառում նրա սիրելի տեղը, ուր նա նստած էր գիրքը ձեռքում:

—Ո՞չ, այդ դու ես, սիրելի Հենրիկոս, ասաց Լուիզան, դարձնելով նրա վրայիւր չքնաղ աչքերը:

—Ես սենեակումդ էի, բայց չգտայ քեզ այնտեղ, ուստի եկայ ալստեղ, ասաց Հենրիկոսը:

—Գործ ունէիր ինձ հետ:

—Ես ցանկանում էի, որ մենք միասին մի փոքրիկ ձիարշաւ էինք կատարել, արդէն երկար ժամանակ է, որ մենք միասին չենք զբունել:

—Այժմ ես չեմ կարող, գլուխս ցաւում է, իսկ եթէ երեկոյեան լաւ լինեմ, կերթանք միասին, ծանը կերպով ասաց Լուիզան:

Հենրիկոսը դալար խոտի վրայ նստեց քը-
ռոջ մօտ:

— Լուիզա, խօսք ես տալիս, որ հետո
սրտաբաց խօսես, ասաց Հենրիկոսը:

— Կարծեմ, որ ես միշտ քեզ մօտ սրտա-
բաց եմ եղել, սիրելի Հենրիկոս. քո այդ հարցը
ինձ բաւականին զարմացնում է, պատասխանեց
Լուիզան:

— Խնդրեմ ասա՛, ինչո՞ւ համար ես հրա-
ժարուել Կասսիլի կենակիցը լինելուց:

— Նրա համար, որ ես նրան չեմ սիրում:

— Հապա դու ո՞ւմն ես սիրում:

Այս հարցը շփոթեցրեց Լուիզային, բայց
շուտով կարողացաւ նա իրեն ուղղել:

— Ոչ ոքի, կամացուկ պատասխանեց
Լուիզան:

— Խաբում ես դու ինձ, Լուիզա:

— Ո՛չ, չեմ խաբում:

— Ուղիղն ասա՛:

Լուիզան այլ ևս չ'կարողացաւ իրան զըս-
պել. նա երկու ձեռքով բռնեց եղբօր պարա-
նոցից և ամուր սեղմեց իւր սրտատրոփի կրծքին:

— Սիրելի Հենրիկոս, դու գիտես, որ ես
իմ ամբողջ կեանքում ոչ մի գաղտնիք չեմ
ծածկել քեզնից և այժմ էլ չեմ կարող
ոչինչ ծածկել: Ես շատ եմ սիրում քեզ, այդ

դու լաւ գիտես, ուստի և ամեն բան կը յայտ-
նեմ: Դու երիտասարդ ես, Հենրիկոս, դու իմ
ամեն ասածներս լաւ կը հասկանաս, ասում
էր Լուիզան:

— Ասա՛, քոյրիկ, ամեն բան բաց կերպով
ասա ինձ, ինչ որ սրտումդ կայ:

— Սիրելի Հենրիկոս, ես սիրում եմ Մօ-
րիսին, ասաց Լուիզան հայեացքը կենդրոնաց-
նելով եղբօր վրայ: Կարծես նա ուզում էր
եղբօր դէմքի արտայալութիւնը կարդալ, թէ
բնչ կասէ այս սոսկալի խօսքերից յետոյ:

Հենրիկոսը տեղից վեր թռաւ, կարծես
մի օձի խալիթոց զգաց իւր կրծքում:

— Լուիզա, դու չ'պէտք է նրան սիրես,
հաստատայէս ասաց Հենրիկոսը:

— Ո՛չ, սիրելի Հենրիկոս, բնչ ես ասում,
այդ անկարելի բան է. եթէ իմ ամուսնու-
թիւնը անախորժ է քեզ, սպանիր անբաղդ
քընչդ, բայց մի նզովիր նրան, ոչ մի բանում
խոչնդոտ մի հանդիսանար, մի կտրիր նրա
ճանապարհը, որ տանում է դէպի երջանկու-
թիւն: Առանց Մօրիսի ես ապրել չեմ կարող,
միայն միակ մահը կարող է մեզ անջատել և
ուրիշ ոչ մի բան: Դուցէ դու ուրիշ միջոց ո-
րոնես Մօրիսին ոչնչացնելու և դորանով
մեզ միմեանցից բաժանես, ոչ, ունալն փորձ

կը լինի, Հենրիկոս։ Կարծեմ իմ բնաւորութիւնը քեզ լաւ յալտնի է, որ իմ կեանքում ոչ մի բանի առաջ չեմ կանգ առել. . . իմացիր, որ այդ մահը ինձ էլ գերեզման կիշեցնէ. բացի սրանից ես թշնամուս կարող եմ մեծապէս վրէժինդիր լինել, լինի դա հայր թէ եղբայր, ինձ համար անխտիր են, այսպէս բորբոքուած խօսում էր Լուիզան եղբօր հետ և նրա աչքերը փայլում էին տենդային ջերմութեամբ. նա գեղեցկացել էր։

Ս.յս խօսակցութեանը Հենրիկոսը մասամբ համակրանք էր տածում։

— Լոիր, քոյր, դու ինձ խօսք ես տալիս, որ մի քիչ ժամանակ տաս այդ բանի մասին լրջօրեն մտածելու։

— Ո՞րքան ժամանակ։

— Երկու շաբաթ։

— Համաձայն եմ, ասաց Լուիզան։

— Դու տեսակցութիւն ունես Մօրիսի հետ։

— Այո։

— Դու արդէն նրան ես պատկանում։

— Ո՞չ, երդւում եմ քեզ։ Ո՞չ, ինչ ազնիւ անձնաւորութիւն է Մօրիսը, որքան սիրում է նա ինձ կաթոգին։

Հենրիկոսը բաժանուեց քրոջից բոլորովին

այլ տրամադրութեան մէջ, քան էր Կասսիլի սենեակից դուրս գալու ժամանակ։

ԳԼ ԺՊ.

ՉԱՐ ԴԻՏՈՒԹԻՒՆ

Կասսիլը Հենրիկոսի հետ խօսելուց յետոյ, մի քիչ հանդարտուեց. նա մեծ յոյս ունէր, որ իւր սարսափելի վրէժինդրութիւնն ի կատար ածելու գործում Հենրիկոսին հաւատարիմ օգնական կունենայ Լուիզայի սրտակից էակին տապալելու համար։ Նոյնպէս լիայոյս էր, որ Հենրիկոսը սաստիկ հետամուտ կը լինի Լուիզայի ամեն մի քայլին և այսպիսով անհնարաւոր կը դարձնէ նրա փախուտը։ Կասսիլը չէր իմանում, որ Հենրիկոսը իւր քրոջ հետ տեսակցութիւն էր ունեցել, բայց չափազանց զարմանում էր այն հանդամանքի վրայ, որ Հենրիկոսը քրոջ ծածուկ տեսակցութեանը խստապէս այլ ես հետամուտ չէր լինում առաջուայպէս, ուստի յոյսը կտրեց նրա՝ իրեն մատուցանելի հաւատարիմ օգնութիւնից, սկսեց աւելի մըտերիմ ու հաւատարիմ օգնականներ որոնել, ուրոնք օգնէին իրեն վրէժինդիր լինելու գարշելի Մօրիսից և Լուիզայից, որը խստութեամբ հերքեց նրա սէրը։

Նա ոչ մի ըոսկէ հոգու անդորրութիւն

չունէր, նրա գլխում վրէժինդրութեան զանազան ծրագիրներ ալեկոծւում էին, սարսափելի մտքերը տանջում էին նրան. նա մտածում էր, որ Լուիզային մի կերպ բռնէ փախուստ տալու ժամանակ և բերէ հօր ձեռքը տայ, սակայն այս պարագան նրա համար շատ քիչ էր, ուստի նրա գլխում լուցաւ մի սոսկալի միտք, որը և իրականացրեց:

Ագարակատիրոջ բնակավայրից մի քանի մղոն հեռաւորութեան վրայ կար մի ձուլանոց, ուր գնաց Կասսիլը:

— Ո՛չ, ի՞նչպէս եղաւ, որ մեր գործարանըն եկար պարոն Կասսիլ, հարցրեց բանուորներից մէկը:

— Տղակ, ես ձեզ հետ մի խորհրդաւոր գործ ունեմ, որի մասին այժմ ոչինչ չեմ կարող ասել, ուստի կը ցանկանայի, որ ձեզնից հինգ հոգի մի ժամից յետոյ գալին ինձ մօտ այս մերձակալ թուփերը, ես այնտեղ սպասելիս կը լինեմ ձեզ, աւաց Կասսիլը:

— Պատուէրդ մի ժամից յետոյ կատարուած կը լինի, պարոն Կասսիլ, Կասսիլը գուրս ե՛, գործարանից և հասաւ թփերին. այստեղ նա թագ կացաւ թփերի մէջ:

— Ի՞նչ կը հրամայէք, պարոն Կասսիլ, հարցրին բանուորները հասնելով նշանակած

տեղը հենց այն ըոպէին, որ Կասսիլը որոշել էր: — Դուք գիտէք, թէ որտեղ է գտնուում սատանաների կամուրջը, հարցրեց Կասսիլը:

— Ի՞նչպէս չ'գիտենք:
— Կարող էք գուք ինձ մի ծառայութիւն անել, որի համար առատ վարձատրութիւն կը ստանաք ինձնից, հարցրեց անգութ Կասսիլը:
— Կարող ենք, կարող ենք, պարոն Կասսիլ, համարեա միաձայն պատասխանեցին բանուորները:

— Բայց ի՞նչ որ ձեզ հաղորդեմ, հարկաւոր է գաղտնիք պահել ձեր սրտի մէջ:

— Այն, կը պահենք:
— Ուրեմն, լսեցէք. պարոններ, եթէ գուք կարողանաք ի կատար ածել այս, ինչ որ ես ձեզ հիմա կը յայտնեմ, ապա գուք առատապէս վարձատրուած կը լինիք: Սակայն այս ևս իմացէք, որ եթէ յետոյ գաւաճան ցոյց տաք ձեզ կամ եթէ ձեզ յայտնած գաղտնիքներս ուրիշներին հաղորդէք, այն ժամանակ ձեզ կը սպասէ այն, ինչ որ գուք բոլորովին չէք ել երևակալու. ձեզ այնպիսի մի պատուհաս կը պատահի, որ ձեր կեանքումը տեսած չ'լինէք. լաւ իմացէք, որ պարոն Կասսիլը կատակել չի սիրում:

— Հաւաստի եղիր այդ կողմից և յոյս ու-

նեցիր մեղ վրայ, պարոն Կասսիլ, մենք շատ
լաւ գիտենք, որ մեր այս ծառայութիւնը
զուր չի անցնիլ, ուստի այսպիսի ծանր գոր-
ծերը, մենք մեծ ցանկութեամբ և հաւատար-
մութեամբ ենք գնում:

— Եթէ ես հրամայեմ, որ մի մարդու սպա-
նէք, այն ժամանակ ի՞նչ... հարցրեց Կասսիլը:

— Ո՛, այդպիսի մարդուն մենք այնպիսի
ճարտարութեամբ խեղդամահ կանենք, որ մի
փոքր ձայնն էլ չի հանիլ, ծիծաղելով ասաց
բանուորներից մէկը:

— Կաւ, եթէ այդպէս է, ուրեմն լսեցէք:
Նետեսեալ առաւօտը, շատ վաղ, համարեա մը-
թանը պէտք է գնաք սատանաների կամուր-
ջը և այն մեծ նեցուկը, որի վրայ ամրացրած
է կամուրջը, սղոցէք. սակայն այնպէս սղո-
ցէք, որ կարողանայ քանդուել հէնց այն ըո-
պէտմ, երբ որ նրա վրայով որ և է մարդ
անցնէ, մի խօսքով, չկարողանայ երկու ձիու
ոտների ճնշմանը դիմանալու, կարող էք ճըշ-
տութեամբ այդ գործն ի կատար ածել:

— Ի հարկէ, ի հարկէ, պարոն Կասսիլ:

— Ահա ստացէք, այս ձեզ կանխավճառը,
քաջութիւն ձեռք բերելու համար մի քանի
բաժակ օղի խմեցէք, ասաց Կասսիլը մի բուռ
ոսկի տալով բանուորներին: Բանուորները ա-

ռատ կանխավճառը ստանալով, գլուխ տուե-
ցին ու հեռացան:

— Այս, Լուիզա, Կասսիլը կատակ անել
չի սիրում: Դու ինձ մոռացար, դու ինձ ար-
համարհեցիր մի գծուծ սրիկայի համար... դու
ի դերեւ հանեցիր իմ երջանկութիւնը, որի
վրայ շատ տարիներ մտածել եմ... Անգնութ
Լուիզա, քո մէջ մարդկային զգացմունքնե-
րը բոլորովին քարացել են... ժամանակ է,
որ դու քո ընթացքիդ համեմատ արժանաւոր
պատիժը կրես ինձանից, այսպէս խօսալով
Կասսիլը. Հասաւ իւր բնակարանին:

Այս ժամանակ դռան մօտ մի ձայն լսուեց:

— Ո՞վ է այդտեղ, ձայն տուեց Կասսիլը:

— Ես եմ, դուռը բաց, պատասխանեց ա-
գարակատէրը:

Կասսիլը դուռը բաց արեց:

— Ես կարծում էի, թէ դու վաղուց քնած
կը լինէիր, հօրեղբայր, ասաց Կասսիլը:

— Ես մի քիչ սաելիք ունեմ քեզ:

— Ասա, տեսնենք, լսում եմ:

— Ինձ այնպէս է թւում, թէ Լուիզան
իւր հայեացքը փոխել է և կարծես թէ նա
զղջում է իւր արարմունքի վրայ, ասաց ագա-
րակատէրը:

— Ես ասած չեմ հասկանում, հօրեղբայր,

Եկել ես դու ինձ հետ կատամկ անելու, ի՞նչ է,
ասաց զայրացած կասսիլը:

— Բոլորովին ո՛չ, այսօր Լուիզան ինձ հետ
երկար և մտերիմ խօսակցութիւն ունեցաւ...:

— Ի՞նչ խօսակցութիւն էր այդ:

— Ինչպէս երեսում է, նա զղջում է իւր
արարմունքի վրայ, խնդրել է աղախնից, որ
ինձնից ներողութիւն խնդրէ այս անախորժ
խօսակցութեան առթիւ, որ ինձ հետ այնքան
կոպտաբար վարուեց: Վերջին խօսակցութեան
ժամանակ նա հետս շատ մեղմ վարուեց, ասաց
ագարակատէրը:

— Իմ մասին խօսեցի՞ր նրա հետ:

— Այո՞:

— Ի՞նչ պատասխանեց:

— Գործը լրջօրէն քննելու համար երկու
օր ժամանակ խնդրեց և ասաց, որ երկու օ-
րուանից յետոյ վերջնական որոշումը կը յայտնէ:

— Հա, հա, հա, չարամտութեամբ խըն-
դաց կասսիլը: Այո՞ այդ ճշմարիտ է, երկու
օրից յետոյ նա իւր վիճակը կ'որոշէ, վրայ բե-
րեց կասսիլը:

— Ի՞նչ է նշանակում այդ, հարցրեց զար-
մացած ծերուկը:

— Եռտով դրա նշանակութիւնը կ'իմա-
նաս: Ինձ այլ ևս ոչ մի բան մի հարցնիլ,

որովհետեւ պատասխանը բնաւ չես ստանալ:

Ագարակատէրը հեռացաւ կասսիլի մօտից
բոլորովին չիմանալով խորհրդաւոր խօսքերի
նշանակութիւնը:

ԳԼ ԺՊ.

Ա Ն Զ Ա Տ Մ Ի Ց Ա Ռ Ա Զ

Հիմա ընթերցողին պարզենք, թէ ինչու
Լուիզան եկաւ հօր մօտ և փաղաքշական ու
մտերմական խօսակցութիւն սկսեց: Լուիզան
վճռել էր հայրական տունը յաւիտեան թող-
նել. նա լաւ գիտէր, որ նրա հպարտութիւնն
իրեն ներելուն արգելք կարող էր լինել, ուս-
տի փափառում էր, որ իւր ծերունի հօրը վեր-
ջին անգամ կարողանայ իւր մատաղ կըծքին
սեղմել: Նրան լաւ յայտնի էր, որ ինքը խո-
րը կերպով վիրաւորել էր հօր՝ իւր ուղ-
ղած շանթահարիչ խօսքերով, ուստի աշխա-
տում էր մի կերպով սիոփել նրան և հաշտուել:

Մտնելով հօր սենեակը, Լուիզան խան-
դագործով ժպիտով մօտեցաւ հօրը և ամուր
սեղմեց իւր կըծքին:

— Հայրիկ, դու ինձ վրայ բարկացած ես:

— Ես երբէք չեի սպասում, որ հարազատ
դուստրս ինձ այնպէս վշտացնէր, ասաց հայրը:

— Ես այդ դէպքում յանցաւոր չեմ, հայ-

ըիկ, քանի որ գու պահանջում էիր ինձնից
այն, որի իրագործելն անհնարին էր ինձ հա-
մար, մեղմաբար ասաց Լուիզան:

— Սիրելի Լուիզա, գու գիտես թէ Կաս-
սիլը ինչպիսի ազնիւ անձնաւորութիւն է, գու
կարող էիր նրա հետ երջանիկ լինել:

— Սակայն ի՞նչ անեմ, որ նրան չեմ
կարող սիրել:

— Հապա ումն ես սիրում:

— Ոչ ոքի, հայրիկ:

— Կասսիլը կարծում է, որ իւր հակա-
ռակորդը ոչ ալ ոք է, եթէ ոչ Մօրիսը, ասաց
ծերուկը:

Լուիզան այլալուեց:

— Եւ գու հաւատացի՞ր, հայրիկ:

— Ի հարկէ, ոչ, հոգեակս իմ:

— Ես բոլորովին զարմանում եմ, հայրիկ,
որ գու այդքան շտապում ես իմ ամուսնու-
թեան համար: Միթէ ցանկանում ես, որ ես
շուտով անջատուեմ քեզնից:

— Լուիզա, ի՞նչպէս եղաւ, որ գլխումդ
այդպիսի միտք ծագեց:

— Գիտես, հայրիկ, ես չեմ սիրում, երբ
ինձ այդպիսի բան են հրամայում և ահա
միակ պատճառը, թէ ի՞նչու անցեալ անգամ
այնպէս անքաղաքավարի ու կոպիտ վարուեցի

քեզ հետ: Սիրելի հայրիկ, խնդրեմ ներիր և
ժամանակ տուր մտածելու գործիս վրայ, գու-
ցէ պատահի, որ համաձայնուեմ Կասսիլի հետ,
այսպիսի խօսքերով աշխատում էր Լուիզան
հօրը մխիթարել:

Ագարակատէրը գգուանքով նալեց Լուի-
զալի վրայ և նրան ամուր սեղմեց իւր կրծքին:

— Ներեցի՞ր ինձ, հայրիկ, փաղաքշանքով
հարցրեց Լուիզան:

— Այո, այո, որդեակս, ծերունին նորից
փայփայեց աղջկանը:

— Հայրիկ, ասա խնդրեմ, ցանկանում
ես իմ ապագայ երջանկութիւնը, ասաց Լուիզան:

— Լուիզա, միթէ գու երբ և իցէ դրա
վրայ տարակուսել ես:

— Ոչ, բայց ասա խնդրեմ, ես հիմա եմ
ուզում քեզնից այդպիսի խօսքեր լսել, թա-
խանձեց Լուիզան հօրը:

— Որդեակ իմ, Լուիզա, այո, ես փափա-
գում եմ քեզ այնպիսի երջանիկ օրի մէջ տես-
նել, որոնք աշխարհումս կարող են գոյութիւն
ունենալ, ասաց հայրը:

Լուիզան հօրը սեղմեց իւր կրծքին, բայց
աչքերը փայլուն արտասուքով լճացել էր
արդէն:

— Սիրելի հայրիկ, մնաս բարեաւ, գոչեց

Լուիզան և հասլճեպով դուրս գնաց հօր սե-
նեակից:

Թշուառ ծերուկին յայտնի չէր, որ իւր
միակ դուստրը իսպառ էր մնաս բարեաւ ա-
սում, որ վաղը նա այլ ևս չը պէտք է տեսնէր:
Լուիզան մտաւ իւր սենեակը և անզգայ
պառկեց մահճակալի վրայ: Նա մտաբերելով
հօրից անջատուելը դառնապէս հեկեկում էր:

— Ների՞ր ինձ, թանկագին հայր, դու այլ
ևս քո սիրուն Լուիզային չես կարող տեսնել...
շատ կարելի է իմ վարմունքիս համար պատ-
ժուեմ, սակայն, լաւ իմացած եղիր հայր,
որ ինձ համար կեանքը դոյլութիւն չունի ա-
ռանց Մօրիսի, ինքն իրեն խօսում էր Լուիզան:

Զերմ արտասուքը սակաւ մի ամոքեցին
նրա փղձկալի սիրտը, նա տեղից վեր կացաւ
և նստեց պատուհանի մօտ:

— Ինչո՞ւ է սիրտս այսպէս ծանր ճընշ-
ւում... ըոպէները ինձ համար սարսափելի են
դարձել: Կարծես մի որ և է դժբաղդութիւն
պէտք է պատահի ինձ, ինչպէս որ սիրտս թէ-
լադրում է, նորից նրա աչքերը լճացան ար-
տասունքի կաթիլներով:

ԳԼ ԺԵ.

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՎՐԵՒՆԴՐՈՒԹԻՒՆ

Կէս գիշերին, երբ ագարակատիրոջ ընա-
կարանում ամենքը խոր և հանգիստ քնի մէջ
էին ընկղմուած, Լուիզան սրտատրով տեղից
վեր կացաւ և յուշիկ քայլերով դուրս եկաւ
իւր սենեակից: Տենդալին դողը իւր սոսկալի
ջերմութեամբ պաշարել էր նրան, սակայն
Լուիզան իւր հոգու անվեհերութեամբ ամեն
մի արգելառիթ զգացմունքի և երկիւղի յաղ-
թելով գնում էր դէպի իւր դիտաւորուած
նպատակը: Լուիզայի սրտակից ծառան, որ
փոքր ժամանակից սրա հաւատարիմ գերին
էր, ձիու սանձից բռնած սպասում էր իրանց
տնից մի քանի քայլ հեռաւորութեան վրայ:

— Դու այստեղ ես, Փիլիպպոս, հարց-
րեց Լուիզան:

— Այն, այստեղ եմ, պատասխանեց ծառան:
Լուիզան շտապով բարձրացաւ ձիու
թամբը:

— Մնաս բարեաւ, սիրելի Փիլիպպոս, փա-
րելի մտերմութեամբ վերջին հրաժեշտը տուեց
իւր սրտակից ծառային և վերջինիս ձեռքը
դնելով մի քանի դրամ, աւելացրեց, — շնոր-
հակալ եմ, մեծապէս քո ծառալութեանդ հա-

մար, այս գաղտնիքը սրտումդ պինդ պահիր։
Այս ասելուց յետով նա թռչնի պէս առաջ
սուրաց։

Մի քանի սաժէն անցնելուց զկնի, նա
տեսաւ մի սև ստուեր։ Լուիզան ձին սանձա-
հարեց և կանգնացրեց։

— Ես վաղուց եմ քեզ այստեղ սպասում,
Լուիզա, մի քանի քայլ հեռաւորութիւնից
լսուեց մի ձայն։

— Այդ դու ես Մօրիս։

— Ես եմ։ Ամեն բան պատրաստ է։

— Այո՛, ամեն բան պատրաստ է։ Հապա
մւր է քո ձին։

— Ահա այնտեղ է։ Մօրիսը մի քանի
քայլ մեկուսի մատնացոյց արաւ։

— Հիմա գնում ենք, Լուիզա, ասաց Մօ-
րիսը նստելով թամբի վրայ։

— Հապա դու, Լուիզա, ինչպէս դուրս
եկար ձեր տնից։

— Զեռնարկութեանս մէջ երկինքն ինձ
օգնեց, այսօր երեկոյեան մեր տանը ամենքը
շուտ քննեցին, որից և ես կարողացաւ օգտուել
առանց որ և է խոչնդոտի, դուրս եկայ տնից
և ուղևորուեցալ դէպի այս կողմը, ասաց
Լուիզան։

— 0՛, ինչպէս երջանիկ եմ այս ըոպէիս,

Լուիզա։ Կարծես թէ այս իրականութիւնը ինձ
համար երազ լինի։ Ո՛հ, թանկագին Լուիզա,
միթէ մենք միմեանցից պէտք է բաժանուէ-
ինք, սքանչանալով ասաց Մօրիսը։

— Այո՛, Մօրիս, մեր փոխադարձ նուիրա-
կան սէրը բնութեան օժիտ է, գերեզմանը
միայն կարող էր մեզ միմեանցից բաժանել։

Այդ ըոպէում մի բուի թափանցիկ ձայն
արձագանք տուեց մեր ճանապարհորդների ա-
կանջում։ Զիաւորները ակամայ սարսափեցին։

— Այդ բնչ էր, Մօրիս, հարցրեց Լուիզան։

— Ոչի՞նչ, բու էր, պատասխանեց Մօրիսը։

— Ի՞նչպէս թէ ոչի՞նչ։ 0՛, այդ շատ վնա-
սաբեր կանխագուշակութիւն է, արդեօք այդ
թռչնի աղաղակը դժբաղդութեան արկած չէ
գուժում մեզ, տխուր կերպով ասաց Լուիզան։

— Մի վախենաք, ոչ մի դժբաղդութիւն
չի պատահիլ, միթէ այդքան սնոտիահաւամտ
էք, աշխատում էր հանգստացնել Մօրիսը։

— Անհրաժեշտ է մեր ձիերին աւելի ա-
րագ ընթացք տալ, որպէս զի մեր հետևեց
ոչ ոք չկարողանայ հասնել, հակառակ դէպ-
քում չի կարելի աղատուել, ասաց Լուիզան
և ձիաւորներն առաջ ճեպեցին։

— Ահա և սատանաների կամուրջը մի քա-
նի քայլ հեռու է մեզնից, նրա վրայով անց-

Նելու համար պէտք է ուղիղ ճանապարհով
չ'զնանք, այլ քիչ դէպի աջ շեղուենք, եթէ
ոչ, մենք կարող ենք սխալուել, ասաց Մօրիսը:

— Ի՞նչպէս գիտես, այնպէս էլ արա, պա-
տասխանեց Լուիզան:

Ճանապարհորդների ձիերը միմեանց կից
էին գնում և ուժգին արագութեամբ ոտք
դրեցին սատանաների կամուրջը, մի ինչ որ
անբացատրելի սարսափի ազդեցութեան տակ:
Մի ակնթարթում արձագանք տուեց
Ֆի սարսափելիք, ճայթում, որ խացնում էր
օդը: Մեր ճանապարհորդները երկուսը միա-
սին սուզուեցին մութ ջրի մէջ մինչև գետի
յատակը:

— Ահա ձեր քաղցր երջանկութիւնը, սոս-
կալի ձայնով գոչեց անագորոյն Կասսիլը, որ
թագնուել էր գետի մօտ՝ թփերի մէջ:

Մի քանի ժամանակից յետոյ ջրի մակե-
րեոյթի վրայ տարութերւում էին երկու ան-
գգայ գիտակ: Նրջակայ բնակիչները ճանաչե-
ցին, որ այդ գիտակներից մէկը Մօրիսինն է,
իսկ միւսը՝ Լուիզայինը: Սրանց գէմքերը այն-
քան հանգիստ էին, որ կարծես թէ բաղդա-
ւոր էին նրանով, որ միասին մեռան և յաւի-
տեան անբաժան եղան: Այսպիսի վախճան ու-
նեցան այս երկու՝ փոխագարձ ջերմ սիրով տո-

գորուած՝ զուգակիցները անգութ Կասսիլի
«սարսափելի վրէժխնդրութեամբ սատանանե-
րի կամուրջի» վրայ:

Այս ժամանակից սկսած այդ կամուրջը
աւելի ահոելի գարձաւ մերձակայ բնակիչնե-
րի և երթևեկների համար և թէպէտ շուտով
մի ուրիշ կամուրջ շինեցին, աւելի կայուն,
սակայն ոչ ոք չէր համարձակւում գիշեր ժա-
մանակ ոտք կոխել այդտեղ:



Վ Ե Ր Զ

22984-22989

20.13

5n